ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ

(«Մարդու իրավունքների պաշտպանի մասին»
ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն)

ԵՐԵՎԱՆ 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԲԱԺԻՆ 1. 5
ԲԱԺԻՆ 2. 18
ԲԱԺԻՆ 3. 27
ԲԱԺԻՆ 4. 53
ԱՄՓՈՓՈՒՄ 64

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները և հետընտրական զարգացումներն էական ազդեցություն են գործել մեր երկրի հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա և, հետևաբար, անդրադարձել են նաև անձի իրավունքների ողջ համակարգի, մարդու և քաղաքացու անձնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության և պահպանության իրավիճակի վրա:

Ստեղծված ճգնաժամային իրավիճակի օբյեկտիվ գնահատման, այդ իրավիճակից ելքեր փնտրելու գործում սահմանադրական պարտականություն է կրում նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ Պաշտպան), որին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով լիազորություն է վերապահված՝ հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում հանդես գալու արտահերթ հրապարակային զեկույցներով:

Սույն արտահերթ հրապարակային զեկույցի (այսուհետ՝ զեկույց) բովանդակությունը և կառուցվածքը պայմանավորված են նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների համալիր վերլուծություն կատարելու նպատակով:

Զեկույցի առաջին բաժնում բացահայտվում են ընտրական գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու անհնարինության պայմաններում նախընտրական շրջանի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի փոփոխության դինամիկան, դրա ձևավորման հիմնական օրինաչափությունները: Զեկույցի երկրորդ բաժինը նվիրված է քվեարկության անցկացման օրվա մթնոլորտի և դրա ձևավորմանը նպաստող օրենսդրական հիմնապատճառների վերլուծությանը: Երրորդ բաժնում բացահայտվում են հետընտրական զարգացումների առանձնահատկությունները: Չորրորդ բաժնում ներկայացվում է Պաշտպանի գործունեությունը՝ հետընտրական զարգացումների ընթացքում մարդու և քաղաքացու իրավունքների խախտումների վերացման կապակցությամբ:

ՀՀ նախագահական ընտրությունների հետ առնչվող զարգացումները վերլուծելիս, զեկույցում, իհարկե, նկատի է առնվում այն հանգամանքը, որ ստեղծված նախընտրական և հետընտրական իրավիճակի ձևավորմանը նպաստել էին երկրում առկա բազմաթիվ օբյեկտիվ հիմնախնդիրներ, որոնք դեռևս չէին ստացել իրենց համապատասխան լուծումները, ինչի հետևանքով հասարակության մի զգալի մասի մոտ ձևավորվել էր դժգոհություն: Ի դեպ, հենց այդ հիմնախնդիրներից շատերը նշված էին Պաշտպանի 2006

թ. տարեկան զեկույցում, որում կատարված եզրահանգումները իշխանությունների կողմից, ցավոք սրտի, բավարար ուշադրության չարժանացան:

Միաժամանակ, զեկույցի ողջ շարադրանքի տրամաբանության հիմքում ընկած է այն անժխտելի փաստը, որ նախագահական ընտրությունների ժամանակ հասարակության մի ստվար մասի դժգոհությունը, համապատասխան ուղղվածություն ստանալով, ձեռք բերեց նոր որակներ: Մասնավորապես, ակնհայտ սոցիալական և տնտեսական բևեռացումը, հանրային և, հատկապես, իրավապահ մարմինների նկատմամբ գոյություն ունեցող հասարակական անվստահությունը, իշխանության գերկենտրոնացումը, իշխանության երեք թևերի միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի ոչ արդյունավետ գործողությունը, մարդու և քաղաքացու իրավունքների անբավարար երաշխավորված լինելը, արտոնյալ խավի փակ համակարգի ձևավորումը հասարակության մի զգալի մասին դրդեցին կտրուկ և շրջադարձային փոփոխություններ փնտրել այս խնդիրներին լուծումներ տալու համար:

Ըստ էության, խոսքն այն մասին է, որ հասարակության մի ստվար զանգվածի մոտ ձևավորվեց ծայրահեղական գործունեության պահանջարկ: Այդ իրավիճակում քաղաքական մի շարք ուժեր ձևակերպեցին այդ պահանջարկին համապատասխանող առաջարկ: Այդտեղից էլ սկսվեց հասարակության բևեռացման և անհանդուրժողականության մթնոլորտի խորացումը:

Ընդսմին ակնհայտ է, որ ներկայիս իրավիճակը ձևավորվել է ոչ թե ինքնաբերաբար, սպոնտան ձևով, այլ տարբեր թեկնածուների, քաղաքական ուժերի և ՁԼՄ-ների որոշակի գործողությունների արդյունքում: Ուստի, տեղի ունեցած բոլոր գործընթացները զեկույցում դիտարկվում են վերը թվարկված սուբյեկտների գործողությունների համատեքստում:

Ճիշտ է, այդ գործընթացների վրա ազդեցություն են գործել բոլոր թեկնածուների և նրանց սատարող քաղաքական ուժերի գործողությունները: Սակայն անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումն առաջին հերթին պայմանավորված էր թե իշխանության, թե ընդդիմության որոշակի տարրերի գործունեությամբ: Ուստի, զեկույցում հիմնական շեշտը դրվում է վերջիններիս գործունեության վրա: Ընդ որում, կատարված վերլուծությունն ընդգրկում է նախընտրական շրջանից մինչև ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածը:

ԲԱԺԻՆ 1

Ընտրական գործընթացներում տեղեկատվությունը տարածվում է քաղաքացիների իրազեկման և նախընտրական քարոզչության միջոցով: Պետության խնդիրն է այդ մեխանիզմների գործադրումն այնպիսի ձևով, որը հնարավորություն կընձեռի ձևավորել լիարժեք տեղեկատվական միջավայր:

Հենց լիարժեք տեղեկատվական միջավայրը պետք է հիմքեր ստեղծի հանդուրժողականության հիման վրա ընտրությունների անցկացման համար: Դրա բացակայության պայմաններում ընտրական գործընթացները ծայրահեղական բնույթ են ստանում:

Վերը նշվածը տեսանելի դարձնելու համար անհրաժեշտություն է առաջանում քննարկել նախընտրական քարոզչության այն գործոնները, որոնք այս կամ այն չափով ազդեցին հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների վրա:

Սակայն մինչ այդ գործոններին անդրադառնալը հարկ է նկատել, որ նախընտրական քարոզչությունը մեկնարկեց ընտրական գործընթացի այդ փուլի՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված սկզբնաժամկետից շատ ավելի վաղ: Օգտվելով օրենսդրության անկատարությունից, բացերից՝ զանգվածային լրատվության միջոցները, քաղաքական կուսակցությունները դեռևս 2007 թ. նոյեմբեր ամսից, ըստ էության, քարոզչություն էին իրականացնում նախագահական ընտրություններում մասնակցելու մտադրություն հայտնած քաղաքական գործիչների օգտին կամ նրանց դեմ: Խնդիրն ավելի էր բարդանում, նկատի ունենալով ընտրական օրենսդրության նորմերի և ընտրական իրավախախտումների համար իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի անկատարությունը, որին հանգամանալից անդրադարձ է կատարվել Պաշտպանի 2007 թ. տարեկան զեկույցում: Խոսքը հատկապես վերաբերում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածից դուրս իրականացվող քարոզչության համար քաղաքացիների և քաղաքական կուսակցությունների, դրանց դաշինքների վարչական պատասխանատվության սահմանման հիմնահարցին:

Վերադառնալով բուն նյութին՝ նախ և առաջ անհրաժեշտ է նկատել, որ քաղաքական պայքարի մեջ մտած կողմերի ռազմավարությունների վերլուծությունից առաջին հերթին աչքի է զարնում ընդդիմադիր դաշտում գործող Լ. Տեր-Պետրոսյանի կողմից որդեգրված «քաղաքական ընդդիմախոսների սխալների շահագործման» վրա հիմնված քաղաքականությունը: Եվ չնայած վերջիններիս առկայությանը՝ պետք է եզրակացնենք, որ Լ. Տեր-Պետրոսյանի՝ որպես քաղաքական գործչի վերածնունդը զգալի մասով հնարավոր դարձավ ինչպես օբյեկտիվ գործոնների, այնպես էլ իշխանությունը

ներկայացնող տարբեր գործիչների և իշխանամետ ԶԼՄ-ների՝ նրա դեմ ուղղված հակաքարոզչության շնորհիվ:

Զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցները կոչված են՝ բնակչությանը տեղեկացնելու ընտրությունների, թեկնածուների առաջադրման, նրանց ծրագրերի, ընտրարշավի ընթացքի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին և պարտավոր են իրականացնել իրենց գործունեությունը Սահմանադրության, օրենքների, պետության միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Ընտրական գործընթացների ժամանակ հավասար հնարավորությունների, այդ թվում՝ զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցների մատչելիության և չեզոքության ապահովումը հանդիսանում է խոսքի ազատության և արդար ընտրությունների սկզբունքի իրացման անհրաժեշտ նախապայման:

Հաշվի առնելով հատկապես այդ հանգամանքը և նկատի ունենալով նախագահական ընտրությունների ընթացքում նախընտրական քարոզչության լուսաբանման պրակտիկան, ակնհայտ է դառնում զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցներով ընտրական գործընթացի այս փուլի լուսաբանման գործընթացի առավել մանրամասն կանոնակարգման անհրաժեշտությունը:

Հարկ է նշել նաև, որ հավասարակշռության և անկողմնակալության սկզբունքի պահպանումն առավել կարևորվում է հեռուստաընկերությունների կողմից իրականացվող լուսաբանման ընթացքում, քանի որ, ի տարբերություն տպագիր կամ համացանցային ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների լսարանը և աղդեցության հնարավորություններն անհամեմատ մեծ են:

Դեռևս նախընտրական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածում հեռուստաընկերությունների կողմից իրականացվող լուսաբանումը կրում էր թեկնածուներից մեկի նկատմամբ ընդգծված սուր քննադատական բնույթ: Մինչդեռ, «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» 2002 թ.-ի կոնվենցիան[1] ամրագրում է որոշակի դրույթներ ընտրությունների տեղեկատվական լուսաբանման և ընտրական գործընթացներում ԶԼՄ-ների դերի վերաբերյալ: Մասնավորապես, սահմանվում է, որ կողմերն ապահովում են ընտրությունների, թեկնածուների վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման, տարածման ազատություն, զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցներով ընտրությունների վերաբերյալ տեղեկատվության անկողմնակալ լուսաբանում: Հարկ է անդրադառնալ նաև Եվրոպայի խորհրդի շրջանակներում

[1] www.laws.am

ընդունված Նախարարների կոմիտեի թիվ 15 (1999) հանձնարարականին[2], որն ուղղակիորեն վերաբերում է նախընտրական քարոզարշավի լուսաբանման ընթացքում արդարության, հավասարակշռության և անկողմնակալության սկզբունքների պահպանման նպատակով պետությունների կողմից ձեռնարկվելիք միջոցներին:

Ճիշտ է, հեռուստաընկերությունների կողմից վարվող հետևողական քաղաքական կողմնակալությունը որոշակիորեն մեղմացել էր նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկից հետո, սակայն այդ հանգամանքը թերևս որակական ազդեցություն չունեցավ ձևավորվող իրավիճակի վրա:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական երկրորդ միջանկյալ զեկույցում ևս անդրադարձ է կատարվել նախագահական ընտրությունների ընթացքում ՁԼՄ-ների գործունեության խնդիրներին: Ըստ այդ զեկույցի՝ «Հեռուստատեսությունները եթեր են արձակել ընտրություններին նվիրված պաշտոնական սոցիալական գովազդներ: ԿԸՀ նախագահը կազմակերպել է մամլո ասուլիս, որում հավաստիացրել է ընտրողներին իրենց ընտրության ազատության և քվեի գաղտնիության մասին: Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել քվեների գնման դեմ ուղղված հայտարարությամբ, գլխավոր դատախազն արել է հայտարարություն՝ ընդգծելով ընտրախախտումների համար սահմանված իրավական պատիժները: Լրատվամիջոցների մոնիթորինգը ցույց է տալիս, որ հունվարի 21-ից (քարոզարշավի պաշտոնական մեկնարկից) սկսած զգալի կերպով ավելացել է քաղաքական և ընտրություններին առնչվող տեղեկատվությունը: Լրատվամիջոցների մեծ մասի կողմից թեկնածուների լուսաբանումը ընդհանուր ժամանակի առումով, ավելի հավասար էր, քան նախորդ զեկույցում ամփոփված ժամանակահատվածում: Այդուհանդերձ, Լ. Տեր-Պետրոսյանի լուսաբանումը տարբեր հեռարձակվող լրատվամիջոցներով պարունակում էր բազմաթիվ քննադատական ակնարկներ, մինչդեռ մյուս ութ թեկնածուները ներկայացվում էին ընդհանուր առմամբ դրական կամ չեզոք կերպով»:

Այդպիսով, թերևս կարելի է արձանագրել, որ իշխանությունների քարոզարշավի կարևորագույն մասն էր կազմում Լ. Տեր-Պետրոսյանին և նրա համախոհներին հասարակությունից մեկուսացմանն ուղղված գործունեությունը: Փորձեր էին կատարվում հանրությանը համոզել, որ նրա ընտրազանգվածն են կազմում նոր թալանի ձգտող նախկին պաշտոնյաները և հասարակության անգիտակից, խաբված կամ ապաշնորհ անդամները, ստորին խավի ներկայացուցիչները, այսինքն՝ հասարակության ակնհայտ փոքրամասնությունը: «Երևի հիմա տեսնում են, որ տնտեսությունը վերականգնվում է, մտածում են, որ թալանելու նոր հնարավորություններ են բացվում, ախորժակները երևի

[2] https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec(99)15&Language=lanEnglish&Ver=original&Site=CM&BackColorInternet=9999CC&BackColorIntranet=FFBB55&BackColorLogged=FFAC75

բացվել է», - ասել է Ռոբերտ Քոչարյանը[3]: Սակայն այդ գործողություններն իրականում ոչ թե հանգեցրին թեկնածուի և նրա համախոհների մեկուսացմանը, այլ նպաստեցին հասարակության հետագա պառակտմանը և արդեն իսկ տարանջատված երկու բևեռների միջև անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը:

Այդ տենդենցներն ուժգնացան ընդդիմադիր քարոզիչների նույնպես ծայրահեղ և սուբյեկտիվ գործողությունների արդյունքում: Օգտվելով իշխանությունների կողմից հասարակությունը «մեծամասնություն կազմող» յուրայինների և «ակնհայտ փոքրամասնություն կազմող» հակառակորդների բաժանելու հանգամանքից՝ ընդդիմադիրներն իրենց հերթին հասարակությունը բաժանեցին «մենք»-ի և «ոչ-մենք»-ի՝ շեշտադրելով «մենք»-ի առավելությունները և «ոչ-մենք»-ի «օտարածին» բնույթը (ընդդիմության թեկնածուի նորամուտը ներկայացնելով որպես «համաժողովրդական շարժում», ընդդիմության թեկնածուին՝ որպես «ժողովրդի թեկնածու» կամ «ժողովրդի ներկայացուցիչ», իսկ իշխանություններին բնութագրելով որպես ավազակապետություն, մոնողոլաթաթարական իշխանություն և այլն[4]): Այսպես ձևավորվեց այն հասարակական մթնոլորտը, որն իր դրոշմը դրեց քվեարկության և քվեների հաշվարկման ու վերահաշվարկման գործընթացների վրա, իսկ վերջին հաշվով հանդիսացավ մարտի 1-2-ի ողբերգական իրադարձությունների հիմնապատճառներից մեկը:

Մենք նպատակ չունենք վերլուծելու նախընտրական քարոզարշավի ընթացքում կողմերի ձեռքբերումներն ու կորուստները, գնահատելու նրանց թույլ տված սխալները և թվարկելու հաջողությունները: Այս ամենը պետք է լինի հենց թեկնածուների ուսումնասիրման առարկան:

Այս հարցերին մենք անդրադառնում ենք միայն մարդու իրավունքների, առաջին հերթին՝ խոսքի ազատության և տեղեկատվություն ստանալու իրավունքի տեսանկյունից: Ուստի, հետագա շարադրանքը հետապնդում է միայն մեկ նպատակ: Այն է՝ տեսանելի դարձնել և ընդգծել այն հանգամանքը, որ ժամանակակից հասարակությունում մի կողմի (ընդդիմության) խոսքի ազատության սահմանափակումը և մյուս կողմի (իշխանության) համար այս ոլորտում արհեստականորեն ստեղծված անսահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև իշխանական այլ լծակների ոչ համաչափ և իրավական տեսանկյունից ոչ հիմնավորված օգտագործումը, ինչը նույնպես հանգեցնում է մարդու իրավունքների սահմանափակմանը, կարող են «վատ ծառայություն» մատուցել հենց այդ լծակներն անհիմն օգտագործողներին՝ հանգեցնելով հակառակ արդյունքների:

Իշխանությունների այդպիսի գործելաոճը հանգեցրեց հետևյալ արդյունքների.

---

[3] «Հայաստանի Հանրապետություն» - հոկտեմբերի 27, 2007 թ.:
[4] «Հայկական ժամանակ» - դեկտեմբերի 4, 2007 թ., փետրվարի 6, 2008 թ.:

1. բոլոր սոցիոլոգիական տվյալների համաձայն՝ քարոզարշավին նախորդող ժամանակահատվածում ընտրողների ձայների 3-4 տոկոսն ունեցող թեկնածուն կարողացավ իր շուրջը համախմբել մի այնպիսի ստվար ընտրազանգված, որի հետ, համաձայն բոլոր քաղաքական գործիչների և քաղաքագետների կարծիքի, այսօր անհնար է հաշվի չնստել,

2. նախընտրական փուլում և հետընտրական զարգացումների ժամանակ կտրուկ աճեց Լ. Տեր-Պետրոսյանի հանրահավաքների մասնակիցների քանակը,

3. ընդդիմադիր թեկնածուի շուրջ համախմբվեց հասարակության բոլոր շերտերից, մասնավորապես՝ երիտասարդության ներկայացուցիչներից կազմված մի ստվար ընտրազանգված,

4. նախընտրական քարոզարշավի ընթացքում ձևավորվեց անհանդուրժողականության մթնոլորտ, որը հետագայում վերաճեց փոխադարձ ատելության և դարձավ մարտի 1-2-ի դեպքերի հիմնապատճառը: Թերևս, պարզունակ կլինի ենթադրել, որ անհանդուրժողականության խորացման համար «պատասխանատու» են միայն իշխանությունները: Այս գործում իր «ներդրումը կատարեց» նաև ընդդիմությունը:

Դիտարկենք այդ հետևանքների ձևավորման գործընթացները:

1. Բոլոր հեռուստաընկերությունների, այդ թվում Հանրային հեռուստաընկերության, և իշխանամետ մամուլի կողմից Լ. Տեր-Պետրոսյանի անձին այս կամ այն բացասական հատկության վերագրումը, սուբյեկտիվ և միակողմանի տեղեկատվության գերակշռումը («Գոլոս Արմենիի», «Հայաստանի Հանրապետություն», «Հայոց աշխարհ») ի վերջո նպաստեցին հասարակության մեջ նրա անձի նկատմամբ ուշադրության կենտրոնացմանը, իսկ համախոհների ենթագիտակցության մեջ՝ Լ. Տեր-Պետրոսյանի «տառապյալի» կերպարի ստեղծմանն ու ամրագրմանը: Պատճառներն ընկած են վաղուց հայտնի «պատկերների շրջման» ֆենոմենի մեջ, որի օգնությամբ արտաքինից տրված ինֆորմացիան կամ հույզն անգիտակցականի մակարդակներում կարող են շրջվել այլ պատկերների, որոնք օժտված են ներկայացվածին հակադիր հատկություններով, եթե այն ներկայացված է ոչ այնքան հուսալի կամ հեղինակավոր աղբյուրի կողմից: Իսկ այն, որ իշխանամետ ԶԼՄ-ները հասարակության մեջ չունեն բավարար հեղինակություն՝ դա փաստ է:

Այսինքն, եթե հակափիարի միջոցով նպատակ էր հետապնդվում մարդկանց գիտակցության մեջ պայմանական կերպով ամրագրել տարատեսակ տհաճ զուգորդություններ՝ կապված Լ. Տեր-Պետրոսյանի կերպարի հետ, ապա արդյունքում շատ ընտրողների ենթագիտակցականում գոյացավ նրա «շրջուկը», ինչի հետևանքով նա սկսեց ընկալվել որպես դրական որակների կրող: Եթե հաշվի առնենք, որ նման նյութերի քանակը մի քանի ամիս շարունակ ԶԼՄ-ներում օրեցօր ավելանում էր, ապա օրինաչափ է, որ նույն

համամասնությամբ աճում էին Լ. Տեր-Պետրոսյանին ակամայից «ցավակցողների» և համակրողների շարքերը, որոնք չէին վստահում և դեռևս շարունակում են չվստահել իշխանություններին:

Արդյունքում՝ տևական և հուզականությամբ երանգավորված հակաքարոզչությունը ծառայեց ընդդիմության մի հատվածի գովազդի գործին՝ ապացուցելով այն արտահայտության ճշմարտացիությունը, որ ամեն մի հակագովազդ առաջին հերթին գովազդ է: Իսկ չեզոք քաղաքացիների գիտակցության մեջ նա զուգորդվեց «հալածվածի և չպաշտպանվածի» պատկերներով: Միակողմանիությունը շատ դեպքերում բերում է հակառակ արդյունքի:

Անհրաժեշտ է առանձին անդրադառնալ ՀՀ 2-րդ Նախագահի գործոնին, որն, անշուշտ, նպաստեց ընդդիմադիր գործչի վարկանիշի բարձրացմանը նախընտրական փուլում: Ինչպես հայտնի է, 2-րդ Նախագահի կողմից արված մի շարք սուր մեկնաբանություններ շատ անգամ կրում էին նաև հեգնանքի դրոշմ՝ հրահրելով հակառակորդին աջակցող ուժերին ապացուցելու իրենց վճռականությունը: Օրինակ, նախընտրական պայքարի շեմին, Ռ. Քոչարյանը մեկնաբանելով Լ. Տեր-Պետրոսյանի թեկնածության հնարավոր առաջադրումը նշեց, որ այդ դեպքում «Լ. Տեր-Պետրոսյանը կդառնա շարքային ընդդիմադիր»[5]: Ընդհանրապես՝ պաշտոնատար անձանց տրված որակումների շարքն ընտրողներից շատերի կողմից ընկալվեց որպես չափազանց կտրուկ, ինչն իշխանությունների հանդեպ հասարակության մի մասի մոտ առկա անվստահության պայմաններում որոշ չափով դրականորեն անդրադարձավ առաջին Նախագահի վարկանիշի վրա: Իսկ հասարակության մեջ նման անվստահության առկայությունն օբյեկտիվորեն հաստատում են բազմաթիվ քաղաքագետների և սոցիոլոգների կարծիքները:

Լ. Տեր-Պետրոսյանի ընտրազանգվածի ընդլայնմանը և ակտիվացմանը նպաստեցին ևս երեք հանգամանք, որոնք իշխանությունների գործողությունների արդյունք էին: Առաջինը՝ նրա կողմնակիցների նկատմամբ իշխանական լծակների օգտագործմամբ գործադրվող ճնշումները: Երկրորդը՝ իշխանությունների կողմից նրան տրված «հնարավորությունը»՝ անձամբ ներգրավվելու անցկացվելիք հանրահավաքի մասին տեղեկություններ տարածող և անհասկանալի պատճառներով ոստիկանություն բերման ենթարկված անձանց, այդ թվում՝ քաղաքական գործիչների և թերթերի խմբագիրների «ազատագրման» գործընթացին: Այդ գործողությունները, բնականաբար, ընկալվեցին որպես «հերոսական» միջամտություններ ընտրողների աչքերում, ստեղծելով նրա շուրջը «պսակի» էֆեկտ՝ մեկ այլ սոցիալ-հոգեբանական ֆենոմեն, որն անգիտակցաբար մղում էր ընտրողներին հետագայում մեկնաբանություններ կատարելու

[5] «Հայաստանի Հանրապետություն» - սեպտեմբերի 26, 2007 թ.:

հոգուտ Լ. Տեր-Պետրոսյանի: Եվ նորից այլոց իրավունքները սահմանափակող (ոչ մասսայական միջոցառման կասեցմանն ուղղված ոստիկանության գործողությունների՝ միջոցառման մասնակիցներին բերման ենթարկելու արդյունքում առաջացած միջադեպի կապակցությամբ) ոստիկանության աշխատակիցները հենց դրանով իսկ «արջի ծառայություն» մատուցեցին իշխանության թեկնածուին: Երրորդը՝ իշխանությունների կողմից Լ. Տեր-Պետրոսյանին և նրա աջակիցներին տրված «հնարավորությունը»՝ իրավապահ մարմիններին մեղադրելու Արտաշատում և Թալինում հանրահավաքների ընթացքում տեղի ունեցած միջադեպերի քննության հարցում կողմնակալություն ցուցաբերելու մեջ:

Բարձրաձայնելով երկրում առկա խնդիրները, իշխանության ամենաթողության, իշխանությունների, հատկապես պաշտոնատար անձանց և ղեկավարների գործունեության մասնավոր կողմերը, դրանք ներկայացնելով և մեկնաբանելով հռետորական և լեզվական յուրահատուկ ոճով, Լ. Տեր-Պետրոսյանը կարողացավ ոտքի կանգնեցնել «քնած հասարակությանը»:

«Ըմբոստ» դիրքորոշում ունեցող և իշխանություններից դժգոհ քաղաքացիները, առաջնորդվելով ամեն գնով այս իշխանություններից ազատվելու սկզբունքով, հետզհետե հակվում էին այն մտքին, որ «Լևոնին ընտրելը» ներկա իշխանություններին անվստահություն արտահայտելու ամենաարդյունավետ միջոցն է: Տեսնելով նրա անձի մեջ «վճռական, չկաշառվող, սկզբունքային և խելացի գործչի» գծերը՝ նրանք ակնկալում էին, որ Լ. Տեր-Պետրոսյանը կարողունակ է վերջ դնելու ներկա «կոռումպացված օլիգարխիկ իշխանություններին»:

Նման դիրքորոշումներն օրեցօր ավելի ծայրահեղ բնույթ էին ստանում, որի արդյունքն էր հասարակության մեջ երկու հիմնական բևեռների ձևավորումը. նրանք, ովքեր ցանկանում են տեսնել քաղաքական դաշտում փոփոխություններ ընդդեմ ներկա ռեժիմի, և նրանք, ովքեր դեմ են կտրուկ փոփոխությունների:

Ընդդիմության քարոզարշավի ամբողջ ընթացքում «կարմիր թելով» անցնում է Լ. Տեր-Պետրոսյանի առաջադրման՝ որպես «համաժողովրդական շարժման» գաղափարի ներշնչումը: Սա ամենից առաջ նպատակ ուներ ժողովրդի մեջ արթնացնելու «շարժման» հոգեբանական նախադրյալները:

Պետք է նշենք, որ ձևավորված իշխանական համակարգը դրա համար բարենպաստ հիմք էր նախապատրաստել: 1988 թ.-ից ի վեր չունենալով նման համախմբվածություն, որը, ամենից առաջ, ձևավորում է «ընդհանրության» զգացում, հասարակության մի ստվար զանգված ներկա պայմաններում իրեն օտարված, մեկուսացած էր զգում երկրում կատարվող գործընթացներից, ինչի հետևանքով ընտրողներից շատերը փնտրում էին միավորման նոր, այնպիսի հնարավորություններ,

որոնց իրացման միջոցով նրանք կարող էին վերականգնել իրենց իրավունքները և ազատությունները: Իսկ 1988 թ. հոգեբանական ֆոնն ամբողջացնելու համար ընտրապայքարը զանգվածներին ներկայացվում էր որպես «ազգային-ազատագրական պայքար, ճիշտ այնպես, ինչպես 88-ին էր»[6]: Կարելի է փաստել նաև, որ ձևավորված օլիգարխիկ համակարգը և կադրային քաղաքականությունը մեծապես դրան օգնում էին: Այս հանգամանքը դեպի ընդդիմության թեկնածուն էր կողմնորոշում լրացուցիչ «մարդկային ռեսուրսներ»:

2. Լ. Տեր-Պետրոսյանն իր նախընտրական քարոզարշավը հիմնականում իրականացնում էր հանրահավաքների և երթերի կազմակերպման միջոցով, չնայած եթերով հանդես գալու հրավեր նա ստացել էր: Հանրահավաքների մասնակիցների թվի ավելացմանը զուգընթաց ընդլայնվում էր նաև նրա ընտրազանգվածը:

Այս գործում նույնպես իրենց «ներդրումը» կատարեցին, նախ, իշխանությունները: Հանրահավաքների մասնակիցների քանակի հետզհետե աճն առաջին հերթին պայմանավորված էր ընտրողների մի ստվար մասի ձգտումով՝ հաղթահարելու իշխանությունների կողմից պարտադրված ընդդիմության տեսակետների շուրջ ինֆորմացիայի պակասությունը և տեղեկատվական միակողմանիությունը: Հենց այդ պատճառով ընտրողներից շատերը սկսեցին մասնակցել ընդդիմության հանրահավաքներին՝ անձամբ տեսնելու և լսելու կատարվածի մասին, «արգելված պտուղի» ձգողականության ֆենոմենի ազդեցության ներքո:

Հանրահավաքների մասնակիցների թվի աճին նպաստեցին նաև ընդդիմության, առաջին հերթին Լ. Տեր-Պետրոսյանի կողմից կիրառված զանգվածների համախմբման և կառավարման հնարքները:

Ընդդիմության քարոզչության մեջ լայնորեն օգտագործվել են մանիպուլյատիվ տեխնոլոգիաներ: Ընդ որում, զանգվածային հոգեբանության առանցքը կազմում է այն հատկությունը, որ հոծ բազմություններին մատուցվող գաղափարները բոլորովին կարիք չունեն ռացիոնալ փաստարկումների կամ ապացույցների: Այստեղ կարևոր է հոգեբանական նախապատրաստական ընթացքը, երբ ձևավորվում է համապատասխան հուզական ֆոնը, որից հետո հնարավոր է դառնում մանիպուլյատիվ գաղափարների ձևավորումը, որոնք արդեն հայտնվելով զանգվածի մեջ և ենթարկելով «վարակման» սկզբունքին՝ արագ տարածվում են որպես բացարձակ ճշմարտություններ: Քանի որ զանգվածը միշտ ենթակա է տարբեր գրգռիչների, նրա վարքը միշտ փոփոխական է այդ գրգռիչների բովանդակությանը համապատասխան (նա կարող է ծափահարել ոստիկաններին, երբ հնչում է, որ «ոստիկանները ձեռք չեն բարձրացնի իրենց ժողովրդի

[6] «Հայկական ժամանակ» - հունվարի 22, 2008 թ.:

վրա», և կարող է դրսևորել ագրեսիվություն, երբ ներշնչում են, թե ոստիկանությունը բռնություն է կիրառում, ծեծում է, ջարդում կողմնակիցներին):

Զանգվածը ենթակա է պատկերավոր մտածողության: Երբ նրան ներկայացվում է բացասական հույզերի օբյեկտը՝ «գործող իշխանությունը»՝ որպես վերացական գաղափար, ապա այդ դեպքում դժվարություն կարող է առաջանալ նրա հույզերն ուղղորդելու «դեպի» կամ «դեմ»: Իսկ երբ բացասական հույզի օբյեկտն անձնավորվում է կոնկրետ առարկայական կերպարով (երբ տալիս են պաշտոնյաների անուններ), ապա բացասական կերպարը, ստանալով կոնկրետ դիմագծեր, անհանդուրժողական միտումներին հստակ ուղղվածություն է տալիս:

Գաղափարները մատուցելով կատեգորիկ, սպոնտան ձևով, օգտագործելով զանգվածների վրա լուրերի, ասեկոսեների ներգործության հնարավորությունը, քարոզչության ամբողջ ընթացքում շեշտը դնելով հասարակության մեջ գոյություն ունեցող դժգոհությունների, չլուծված բազմաթիվ առկա խնդիրների հետ կապված բացասական էմոցիաների վրա, պարբերական և երկարատև ժամանակահատվածում դրանց հուզական վերարտադրությունը ընտրազանգվածի մեջ փոխակերպվեց կայուն բացասական զգացմունքների:

Եթե զանգվածը, պայմանավորված դրանում ներգրավված մարդկանց քանակով, արդեն ունի ուժի զգացողություն, ապա այդ ուժի զգացողությունը կարող է մեծանալ նրանց ուժի գրոտեսկացմամբ և գրոտեսկային չափերի ներշնչման արդյունքում («Հայաստանի ժողովուրդը կրկին ձեռք է բերում կամք, հաղթանակ և այդ հաղթանակը պարտադրելու է ավազակապետությանը»[7]), ինչին ուղղակիորեն նպաստեցին նաև Լ. Տեր-Պետրոսյանին սատարող նախկին ուժերին նոր միացումների մասին հայտարարությունները:

Զանգվածի համար երկրորդական չեն նաև իրեն կառավարողների կերպարները, նա պատրաստ է նրանց ընկալել որպես հերոսների՝ առանց ռացիոնալ վերլուծության և փաստերի համադրության: Ձեռնարկված առաջնահերթ քայլը քաղաքական լիդերի կերպարի կերտումն էր: Լ. Տեր-Պետրոսյանի առաջադրման առաջին իսկ ելույթներում նա հայտարարեց, որ հանդես է գալիս «որպես կոռուպցիայի և ազգակցական և արյունակցական ու խնամիական հարաբերությունների վրա հիմնված իշխանության դեմ պայքարող մարտիկ»[8]): Լ. Տեր-Պետրոսյանը ներկայացվում էր որպես համախմբման և «ատելի իշխանությունների» դեմ «մինչև վերջ» պայքարի ելած «մարտիկ», «իմաստուն քաղաքական գործիչ», որը կերտել է միայն հաղթանակներ և Հայաստանը աշխարհին

[7] «Հայկական ժամանակ» - հունվարի 23, 2008 թ.:
[8] «Հայկական ժամանակ» - դեկտեմբերի 22, 2007 թ.:

ներկայացրել է «որպես հավասար և արժանապատիվ գործընկեր»[9]՝ նրան օժտելով յուրահատուկ խարիզմայով:

Այդպիսի մեխանիզմների կիրառումը հնարավորություն տվեց ոչ միայն հետզհետե ավելացնելու հանրահավաքների մասնակիցների թիվը, այլև ուժեղացնելու նրանց ակտիվության ու կառավարելիության մակարդակը:

Սակայն մենք հեռու ենք այն մտքից, որ ընդդիմադիր թեկնածուի ակնհայտ հաջողությունները բացատրվում էին զուտ սուբյեկտիվ գործոններով: Այդ հաջողությունները, առաջին հերթին, պայմանավորված էին օբյեկտիվ իրողություններով: Հանրահավաքներում արտահայտվում էին այն մտքերը, հույզերն ու ցանկությունները, որոնք ընդհանուր էին մասնակիցների համար և որոնք, ինչպես արդեն նշել ենք, ունեին իրենց օբյեկտիվ հիմքը:

3. Իշխանական քարոզիչներն ուշադրությունից բաց թողեցին այն հանգամանքը, որ ընդդիմության քննադատության թիրախը ոչ թե տնտեսական զարգացման հիմնախնդիրներն են (թունելների, ճանապարների և էլիտար շենքերի կառուցումը), այլ քաղաքացիների մի ստվար խմբի սոցիալական վիճակը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անմխիթար վիճակը, պետական կառավարման ոլորտում առկա բազմաթիվ թերությունները և նմանատիպ այլ երևույթները: Այդ տեսակետից իշխանության ներկայացուցիչները ընտրել էին սխալ մարտավարություն՝ խոսում էին նյութական արժեքների մասին այն դեպքում, երբ հիմնական գաղափարախոսական պայքարը ընդդիմության կողմից տեղափոխվել էր քաղաքական և հոգևոր արժեքների ոլորտ՝ քաղաքացիական ազատություններ, մարդու արժանապատվություն, արդարություն և արդարադատություն, իրավահավասարություն:

Այս առումով շատ հատկանշական է Ռ. Քոչարյանի անկեղծ համոզվածությունը, որ Լ. Տեր-Պետրոսյանի ժամանակ երկրում ոչինչ չի ստեղծվել, և լրագրողներին ուղղված խնդրանքը՝ նշել թեկուզ մեկ բան (օբյեկտ), որ կառուցվել է նրա իշխանության տարիներին: «Փորձեք հիշել՝ ՀՀԾ-ի իշխանության տարիների ընթացքում ի՞նչ մնայուն բան է կառուցվել Երևանում, աղետի գոտում, որևէ այլ տեղ, որ այսօր մեկը կանգնի ու ասի՝ այսինչ բանն իմ օրոք, իմ մասնակցությամբ կառուցվել է և այսօր որպես մնայուն արժեք պահպանվում է»[10]:

Ուստի, պատահական չէ, որ Ազատության հրապարակում հավաքվում էին Հայաստանի հասարակության ամենատարբեր շերտերը, իրենց սոցիալական կարգավիճակով, կրթությամբ, անհատական առանձնահատկություններով միանգամայն հակադիր բևեռներում գտնվող մարդիկ: Նրանց բոլորին միավորում էր մտահոգությունն

[9] «Հայկական ժամանակ» - հունվարի 25, 2008 թ.:
[10] http://news.president.am/arm/separate.php?sub=news&id=1676&month=10&year=2007

այն արժեքների բացակայության կամ պակասի վերաբերյալ, որոնք որոշ հոգեբաններ կամ իրավաբաններ հետագայում բնորոշեցին որպես զուտ «նեյրոլինգվիստիկ» արտահայտություններ՝ հայրենիք, ընտանիք, արդարություն, ժողովրդավարություն, իրավահավասարություն, մարդու իրավունքներ և ազատություններ: Հենց այդ՝ յուրաքանչյուր հասարակության համար կարևորագույն սոցիալական արժեքների, հիմնախնդիրների ոլորտն էին տեղափոխել ընդդիմադիրներն իրենց քարոզարշավի էպիկենտրոնը՝ դրանով իսկ իրենց շուրջը համախմբելով սոցիալական ամենատարբեր շերտերի ներկայացուցիչներին: Այս առումով լիովին հասկանալի է դառնում այն ֆենոմենը, որը շատերի համար անհասկանալի է. երիտասարդության զանգվածային և ակտիվ մասնակցությունը Լ. Տեր-Պետրոսյանի կազմակերպած միջոցառումներին: Չէ՞ որ հենց երիտասարդությունը առավել սուր է ընկալում այդ հավերժական արժեքները:

4. Պաշտոնական ընտրարշավին նախորդող շրջանում և ընտրարշավի ամբողջ ընթացքում ընդդիմադիր թեկնածուն և նրա թիմը քարոզչությունը հիմնականում իրականացրել են գործող իշխանությունների բացասական (ընտրազանգվածի մի հատվածի մեջ «անհանդուրժողականության» էմոցիոնալ դիրքորոշմամբ) կերպարի կերտման շուրջ, հասարակության մեջ նախապատրաստելով անհրաժեշտ ֆոն:

Միևնույն ժամանակ տեղի ունեցավ իշխանության անձնավորում՝ շարժմանը տալով առարկայական ուղղվածություն, օգտագործելով և խորացնելով հասարակության մեջ ձևավորված էմոցիոնալ կարծրատիպերը («ղարաբաղցիներ-հայաստանցիներ», «ղարաբաղյան կլան», «ղարաբաղյան խունտա»): Կարելի է ասել, որ Հայաստանի հասարակությունը ընդդիմության քարոզչության մեջ հստակ բաժանվեց երկու բևեռների՝ մի կողմից Լ. Տեր-Պետրոսյանի ընտրազանգվածը «մենք»-ի, «ժողովրդի», «երկրի տիրոջ» դիրքորոշմամբ և մյուս կողմից՝ «մենք»-ից դուրս մնացյալ «ոչ-մենք»-ը համարվում էր «դավաճան», «մոլորյալ»[11] և այլն: Քարոզարշավի հենց սկզբում, ընտրազանգվածի մեջ «սերմանելով» ընտրությունների օրինականության վերաբերյալ կասկածներ («մեր հաղթանակը այլընտրանք չունի», «հաղթանակը անկասելի է», «մենք հաղթած ենք»[12] բացարձակ արտահայտությունների օգտագործմամբ), ընտրությունների հաջորդ օրը մարդիկ հրավիրվեցին Ազատության հրապարակ՝ տոնելու իրենց հաղթանակը: Իսկ եթե հաղթանակ չլինի, ուրեմն «ընտրությունները կեղծված են», և տրվեց գործողությունների հետագա դիրքորոշումը՝ «մեզանից ոչ ոք տուն չի գնա, մինչև մենք տեր չկանգնենք մեր հաղթանակին և մեր կամքին»[13]:

Շեշտվում էր ժողովրդի և գործող իշխանությունների միջև անջրպետի գաղափարը («քոչարյանասերժական վարչախումբը ժողովրդի համար ատելի, անհարազատ, օտար

[11] «Հայկական ժամանակ» - N 14 (1963) հունվարի 25, 2008 թ., N 30 (1979), փետրվարի 16, 2008 թ.:
[12] «Հայկական ժամանակ» - հունվարի 26, 31, 2008 թ.:
[13] «Հայկական ժամանակ» - N 31 (1980), փետրվարի 17, 2008 թ.:

իշխանություն է»[14]): Կերտելով իշխանությունների «գողի, ավազակի, անբարոյականի, կեղեքիչի, բթամիտի» կերպար մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ժողովրդի «ազատատենչ, իմաստուն, վճռական, ազնիվ, բռնապետության դեմ ոտքի ելնելու վճռականությամբ» և այլն[15] հակադիր կերպար՝ զանգվածի մեջ ձևավորվում էր ոչ միայն անհանդուրժողականություն, այլև վրեժի զգացում՝ հոգեբանական լարվածությունը պահպանելու համար «հանցագործին» պատժելու խոստումներով («...նրա ողջ ավազակախումբը, որը նրա հետ կա՛մ պետք է հայտնվի ճաղերի հետևում, կա՛մ էլ ինչ-որ կերպ ճողոպրի մեր երկրից»): Իսկ արդեն էմոցիոնալ մակարդակում դրանք ամրապնդվում էին հասարակությանը հետաքրքրող և բավարար պատասխան չտրված հարցերում մեղադրանքներով (օրինակ, թանկացումների[16]):

Իշխանությանն ուղղված հակաքարոզչության պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել ընդդիմության կողմից ի սկզբանե իրավապահ մարմինների, դատական համակարգի և պետական այլ ինստիտուտների նկատմամբ օբյեկտիվորեն գոյություն ունեցող անվստահության խորացմանը, իսկ հետագայում արդեն անհանդուրժողականության ձևավորմանն ուղղված դիրքորոշումների տարածումը: Մասնավորապես, քարոզչության բոլոր նյութերում (ընդդիմադիր ԶԼՄ-ներ, բաժանվող տեսանյութեր, թռուցիկներ և այլն) ի սկզբանե տարածվում էր իրավապահ մարմինների՝ իբրև արդեն կերտված իշխանության «թշնամական» կերպարի սպասավոր, հարկադրանքի և բռնության գործիք լինելու գաղափարը: Գրեթե բոլոր հրապարակային հանդիպումներում հատուկ շեշտադրմամբ հնչեցվում էին ոստիկանության կողմից ընդդիմադիր թեկնածուի, նրան սատարող ժողովրդի նկատմամբ բռնություններ, սադրանքներ կիրառելը (ապօրինի խուզարկություններ, ծեծ, բռնություն[17]):

Ընտրարշավի վերջին օրն ընդդիմությունը ընտրազանգվածին հրավիրեց փետրվարի 20-ին տոնելու իրենց հաղթանակը կամ «մինչև վերջ տեր կանգնելու իրենց քվեին»[18]:

Այդպես էր ընդդիմադիր ընտրազանգվածում սերմանվում անհանդուրժողականությունն իշխանության ներկայացուցիչների և իշխանության ընտրազանգվածի նկատմամբ:

Հատկանշական է նաև այն, որ մի շարք արտահայտություններով և միակողմանի մեկնաբանություններով 2-րդ Նախագահն ու «Հայլուրը» ուղղակիորեն օգնում էին ընդդիմադիրներին: Իրադարձությունների ընդգծված «հակալուսաբանումը» ընդդիմության

[14] «Հայկական ժամանակ» – հունվարի 23, 2008 թ.:
[15] «Հայկական ժամանակ» – հունվարի 22, 2008 թ., հունվարի 25, 2008 թ.:
[16] «Հայկական ժամանակ» - հունվարի 23, 2008 թ., հունվարի 25, 2008 թ., հունվարի 31, 2008 թ.:
[17] «Հայկական ժամանակ» - հունվարի 31, 2008 թ.:
[18] «Հայկական ժամանակ» - փետրվարի 17, 2008 թ.:

այդ թևի համար լրացուցիչ խթան էր հանդիսանում՝ օգտագործելով «պաշտոնական» ԶԼՄ-ների ոչ օբյեկտիվ և հաճախ անարդար մեկնաբանությունները՝ «հակաիշխանական» քարոզչությանը առավելագույնս սուր երանգներ տալու համար: Ուշագրավ է, որ իշխանամետ թերթերում և եթերում բազմիցս տարածվել են նյութեր այն մասին, որ հենց Լ. Տեր-Պետրոսյանն է «դրդում ազգին պառակտման» և «նրա մասնակցությամբ ցանկացած միջոցառում հղի է սադրանքներով և արյունալի հետևանքներով»[19]: Հասցեագրելով հակառակորդին նման ագրեսիվ միտումներ՝ իշխանությունները շարունակում էին սրել հակադիր ճամբարների միջև անհանդուրժողականության մթնոլորտը՝ ավելի ու ավելի բևեռացնելով հասարակությունը: Այս հանգամանքը որոշակիորեն նպաստեց արդեն իշխանական և մյուս թեկնածուների ընտրազանգվածներում անվստահության, վախի և որպես արդյունք՝ անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանն ընդդիմադիր զանգվածի հանդեպ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ նախընտրական շրջանում հասարակական լարվածության աճին ուղղակի նպաստել է նաև ընդդիմադիր մյուս թեկնածուների քարոզչությունը: Իրենց քարոզչության մեջ շեշտադրումը դնելով գործող իշխանությունների քննադատության վրա, բարձրաձայնելով երկրում առկա սոցիալական, տնտեսական խնդիրները, մարդու իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակը, նախագահի մյուս թեկնածուներից շատերը ևս նպաստեցին հասարակության մեջ ընդդիմադիր, հակաիշխանական տրամադրությունների ձևավորմանը և հասարակության բևեռացմանը: Սրա արդյունքում այս թեկնածուների ընտրողներից շատերը փետրվարի 19-ից հետո հայտնվեցին Ազատության հրապարակում՝ Լ. Տեր-Պետրոսյանի անձի հետ կապելով իրենց խնդիրների լուծումը:

Ինչ խոսք, ճշմարիտ է այն կարծիքը, որ մենք բոլորս ենք մեղավոր ստեղծված իրավիճակի համար: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա գործընթացները, պատասխանատվության ենթարկվեցին միայն ընդդիմության ներկայացուցիչները: Եվս մեկ անարդարություն:

[19]«Գոլոս Արմենիի», հունվարի 19, փետրվարի 16, 2008 թ.:

ԲԱԺԻՆ 2

Այս բաժնում անդրադարձ է կատարվել՝

ա) քվեարկության օրը Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներին, այդ դիմում-բողոքներով Պաշտպանի ձեռնարկած միջոցառումներին,

բ) վերահաշվարկի հետ կապված օրենսդրական անկատարություններին,

գ) ընտրությունների վերաբերյալ միջազգային դիտորդական առաքելությունների կողմից տրված հակասական գնահատականներին,

դ) ընտրական հանձնաժողովների ձևավորման հիմնախնդրին:

2.1. Նախագահական ընտրությունների մեկնարկից հետո և հատկապես նախընտրական քարոզչության ժամանակ սկիզբ առած հասարակության բևեռացումը և պառակտումն իրենց գագաթնակետին հասան քվեարկության օրը, որն էլ անցավ ծայրահեղ լարվածության և ժողովրդավարական ընտրություններին անհարիր միջադեպերի պայմաններում: Թե՛ իշխանությունը և թե՛ ընդդիմությունը ջանք չխնայեցին միմյանց վիրավորելու և փնովելու համար: Իշխանությունը ցանկացած միջոցներով վարկաբեկում և քննադատում էր ընդդիմությանը, ընդդիմությունը՝ իշխանությանը՝ վերջինիս կոչելով «ավազակապետություն»:

Բնական է, որ ընտրապայքարի նման շիկացած պայմաններում քվեարկության փուլը չէր կարող անցնել հանդարտ և առանց փոխադարձ մեղադրանքների: Սրա հետ կապված՝ մամուլում բազմաթիվ հրապարակումներ տեղ գտան թե՛ իշխանական և թե՛ ընդդիմադիր ճամբարների կողմից թույլ տրված ընտրախախտումների մասին: Ընդդիմությունը հիմնականում բողոքում էր ընտրական հանձնաժողովների անդամների և ոստիկանության աշխատակիցների գործողություններից (անգործությունից), իսկ իշխանամետ ուժերը՝ հիմնականում Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձանց գործողություններից:

Քվեարկության օրը բազմաթիվ բողոքներ են ստացվել նաև Պաշտպանի աշխատակազմում, որոնք բովանդակային առումով գրեթե չեն տարբերվել մամուլում տեղ գտած հրապարակումներից:

Այդ դիմում-բողոքներից հատկանշական են հետևյալները[20].

1. «Ազատություն» ռադիոկայանի լրագրողը հեռախոսով հայտնել է, որ Զեյթունի հանրակացարանների մոտ գտնվող Ս. Սարգսյանի նախընտրական շտաբում քաղաքացիներին տրամադրում են թիվ 9 ձևի տեղեկանքներ, այնուհետև՝

[20] Ներկայացնում ենք քվեարկության օրը Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքները: Դրանց կապակցությամբ հարցումներ են կատարվել պատկան մարմիններին:

միկրոավտոբուսներով տեղափոխում տեղամասային կենտրոններ: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից այս հարցի կապակցությամբ պարզաբանում ստանալ չի հաջողվել: Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խումբը մեկնել է նշված տեղը և արձանագրել այդտեղ կուտակված միկրոավտոբուսների և մեքենաների քանակն ու պետհամարանիշները: Խմբի անդամներին թույլ չեն տվել մտնել Ս. Սարգսյանի նախընտրական շտաբ և հերքել են տեղեկանքների տրամադրման փաստը: Ահազանգով ստացված տեղեկատվությունը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

2. Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձ Հակոբ Հ.-ն հայտնել է, որ Դավիթաշենի 4-րդ թաղամասում մարդկանց միկրոավտոբուսներով տեղափոխում են տեղամասային կենտրոններ: Պաշտպանի արագ արձագանքման խումբը տեղում արձանագրել է փաստը, միկրոավտոբուսների քանակը, որոնք օրենքով սահմանված հեռավորությունից մոտ են կանգնած եղել տեղամասային կենտրոններին:

3. Ստացվել է հաղորդում առ այն, որ Աբովյանում ծեծի են ենթարկել վստահված անձ Լարիսա Թադևոսյանին: Ըստ ճշտված տեղեկությունների, քաղաքացին դիմել է ՀՀ ոստիկանության բաժին, որտեղ նրան տրամադրել են դատաբժշկի ուղեգիր:

4. Վստահված անձ Իվետա Գ.-ն հայտնել է, որ Արտաշատի թիվ 5 դպրոցում կազմավորված տեղամասային կենտրոնում տեղի է ունեցել լցոնում: Մոտ 250 հոգի մուտք են գործել տեղամասային կենտրոն և քվեաթերթիկներ են լցրել քվեատուփի մեջ: Հաղորդումը փոխանցվել է թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը հերքել է նշված տեղեկությունը: Հաղորդումը փոխանցվել է նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

5. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարո Կարապետյանը և նրան ուղեկցող Վարդան Ստեփանյանը, Ստյոպա Ստեփանյանը մուտք են գործել Արարատի մարզի Շահումյան գյուղի տեղամասային կենտրոններ, վերցրել են այլ քաղաքացիների քվեաթերթիկները և անձնագրերը ու քվեարկել նրանց փոխարեն: Ստացված ահազանգը փոխանցվել է ՀՀ ոստիկանության համապատասխան բաժանմունքի պատասխանատու Նյուլբենկյանին:

6. Մալաթիա-Սեբաստիա համայնքում ծեծի է ենթարկվել վստահված անձ Պարգև Մնացականյանը, որը փորձել է կանխել ընտրախախտումները: Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խումբը մեկնել է դեպքի վայր, այնուհետև՝ ՀՀ ոստիկանության բաժին, որտեղ հայտնել են, որ դեպքի առթիվ նախապատրաստվել են նյութեր և փոխանցվել դատախազություն:

7. Էրեբունի համայնքի 13/16 ընտրատեղամասի տեղամասային կենտրոնում ծեծի են ենթարկվել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը, ով որպես դիտորդ գրանցված է եղել «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական

կազմակերպության կողմից, դիտորդական խմբի անդամ Սեդա Մելիքյանը և լրագրող: Պաշտպանի արագ արձագանքման խմբի անդամները հանդիպել են նրանց հետ: Հանդիպման ընթացքում պարզվել է, որ նշված անձինք, ստանալով տեղեկություններ այն մասին, որ տեղամասային կենտրոնում կատարվում են ընտրախախտումներ, այցելել են տեղամասային կենտրոն: Նրանց է մոտեցել ոստիկանության աշխատակիցը և դուրս հրավիրել: Տեղի է ունեցել քաշքշուկ և դեպքի վայր է ժամանել ոստիկանության բաժնի պետը: Միջադեպը փորձել է նկարահանել «Հայկական ժամանակ» թերթի լրագրողը, որին հարվածել են որովայնին և խլել ձայնագրիչը և ֆոտոխցիկը: Դեպքի առթիվ նշված անձինք դիմել են դատախազություն, ինչպես նաև Պաշտպանին:

8. Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբից Ռուբեն Թորոսյանը հայտնել է, որ փետրվարի 19-ին ժամը 15:21 ՀՀ Նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանը Հանրային ռադիոյի «Լուր» հաղորդման միջոցով իրականացրել է հակաքարոզչություն:

9. Վանաձորի թիվ 30/22 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Վահանյանի տեղեկացմամբ, հանձնաժողովը միաձայն քվեարկության արդյունքում ընդունված որոշմամբ Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձ Սոֆյա Քալանթարյանին հեռացրել է տեղամասային կենտրոնից՝ դեռ նախորդ օրվանից հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտելու, հանձնաժողովում պարբերաբար միջադեպեր ու սադրանքներ հրահրելու համար:

Եթե նույնիսկ Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձը խոչընդոտել է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին, այնուամենայնիվ ՀՀ ընտրական օրենսգրքի 27.1 հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ընտրական հանձնաժողովներն իրավունք չունեն վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

10. Քաղաքացի Շուշան Սարդարյանը Պաշտպանին էլեկտրոնային փոստով հայտնել է, որ Արաբկիր համայնքի թիվ 5/20 ընտրատեղամասի տեղամասային կենտրոնում միաժամանակ ներկա են եղել թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի երկու վստահված անձ, ինչն օրենքի խախտում է: Տեղամասային կենտրոնում եղած դիտորդի փոխանցմամբ, ինքը մոտեցել է Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձանցից մեկին և ասել, որ օրենքը թույլ չի տալիս տեղամասային կենտրոնում նույն թեկնածուի միաժամանակ երկու վստահված անձի ներկայություն ու առաջարկել, որ նրանցից մեկը դուրս գա: Լ. Տեր-Պետրոսյանի երկու վստահված անձերն էլ ասել են, որ դուրս չեն գալու: Դիտորդը արձանագրել է օրենքի խախտումը, որից հետո հրավիրել ոստիկաններին եւ նրանց ուղեկցությամբ տեղամասային կենտրոնից հեռացրել Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձանցից մեկին:

11. Մալաթիա-Սեբաստիա համայնքում գտնվող թիվ 8/21 ընտրատեղամասի տեղամասային կենտրոնում Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի 4-5 անդամներ դաժան ծեծի են ենթարկել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Հրաչ Պետրոսյանին: Միջադեպի առնչությամբ վերջինս հայտարարություն է տվել ՀՀ ոստիկանության Մալաթիա-Սեբաստիայի բաժին:

12. Լոռու մարզի թիվ 31/69 ընտրատեղամասի տեղամասային կենտրոնում Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձ Սարգիս Թամազյանը սպառնացել և ահաբեկել է հանձնաժողովի անդամներին: Թամազյանը ասել է, որ եթե որևէ մեկը փորձի խանգարել իրեն անելու ինչ ցանկանում է, ապա բոլորի վերջը վատ է լինելու:

13. Ս. Սարգսյանի Գյումրիի նախընտրական շտաբից հայտնել են, որ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանն իր համախոհների հետ ներխուժել է Գյումրիի թիվ 34/06 ընտրատեղամասի տեղամասային կենտրոն, հայհոյել ու սպառնալով ահաբեկել հանձնաժողովի անդամներին:

14. Երևանի թիվ 16 դպրոցում տեղակայված թիվ 13/02 ընտրատեղամասի տեղամասային կենտրոն է ներխուժել «Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետյանը և գոռալով սպառնացել ու հայհոյել հանձնաժողովի անդամներին: Վերջինս Սերժ Սարգսյանի վստահված անձին սպառնացել է, որ ինքն անձամբ է նրա հետ հաշվեհարդար տեսնելու: Ինչպես փոխանցել է Ս. Սարգսյանի վստահված անձը, մինչ տեղամասային կենտրոնից դուրս գալը՝ Արամ Կարապետյանը հայտարարել է, թե ինքն այնպես է անելու, որ Ս. Սարգսյանին սատարողները բոլորը փախչեն երկրից:

15. Մարալիկի թիվ 36/34 ընտրատեղամասի տեղամասային կենտրոնում ընտրողների մասնակցության ակտիվ փուլում՝ ժամը 15:00–ի սահմաններում, Լ. Տեր-Պետրոսյանի Մարալիկի շտաբի պետ Հարություն Ուռուտյանն իր համախոհների հետ հարձակում է գործել ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի վստահված անձ Սուրեն Ավետիսյանի վրա՝ վերջինիս պատճառելով մարմնական ծանր վնասվածքներ: Ս. Ավետիսյանը բեկորային կոտրվածքներով տեղափոխվել է Գյումրիի հիվանդանոց:

16. Լ. Տեր-Պետրոսյանի շտաբի ներկայացուցիչները խմբերով ներխուժել են նաև Մարալիկի թիվ 36/34, 36/35, 36/36 ընտրատեղամասերի տեղամասային կենտրոններ և փորձել խոչընդոտել հանձնաժողովների աշխատանքներին:

Ընդհանուր առմամբ, ստացվել են մի քանի տասնյակ անանուն հաղորդումներ ընտրություններում ներգրավված անձանց ծեծի ենթարկելու, ինչպես նաև նրանց նկատմամբ ճնշումներ գործադրելու վերաբերյալ, մասնավորապես՝ Քանաքեռ-Զեյթուն, Դավիթաշեն, Մալաթիա-Սեբաստիա, Աբովյան, Արտաշատ համայնքներում:

Այս առումով հարկ է նկատել, որ քվեարկության օրը ստացված բողոքները քանակական առումով համադրելի են 2007 թ. խորհրդարանական ընտրությունների

քվեարկության օրը Պաշտպանին հասցեագրված բողոքների հետ: Սակայն, խորհրդարանական ընտրությունների համեմատ նախագահական ընտրությունների քվեարկության օրն ընտրական գործընթացում ներգրավված անձանց նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ բողոքներն անհամեմատ ավելի շատ էին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Պաշտպանի կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ՝ հաղորդումներում բարձրացված հարցերի վերաբերյալ համապատասխան մարմիններից պարզաբանումներ ստանալու համար, իսկ մի շարք դիմում-բողոքներ փոխանցվել են իրավապահ մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով դրանց ընթացքը որոշելու նպատակով:

Գտնում ենք, որ պատկան մարմինները պետք է բոլոր դիմում-բողոքներում բարձրացված իրավախախտումներով օբյեկտիվ քննություն իրականացնեն և քննության արդյունքների մասին իրազեկեն հասարակությանը՝ վերջինիս պառակտումը, նրա անդամներին յուրայինների և օտարների բաժանելու գործընթացը կասեցնելու և հասարակական համերաշխություն ու քաղաքացիական հնազանդություն ապահովելու նպատակով: Այդ նպատակին հասնելու համար Պաշտպանը նպատակահարմար է գտնում 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ներքաղաքական իրավիճակի հաղթահարման ուղիներն ուսումնասիրող անկախ հանձնաժողովի ստեղծումը:

2.2. Լարված մթնոլորտ է տիրել ոչ միայն քվեարկության ընթացքում, այլև արդյունքների ամփոփման և ձայների վերահաշվարկման ժամանակ:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղ գտած խնդիրներին անդրադարձել է, մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությունը: Վերջինիս միջանկյալ զեկույցում դիտարկված ընտրատեղամասերի մոտ 16 տոկոսում քվեարկության արդյունքների ամփոփումը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ»[21]:

Անդրադառնալով քվեարկության արդյունքների վերահաշվարկին՝ ԵԱՀԿ միջազգային դիտորդական առաքելությունը փաստել է, որ, ըստ ԿԸՀ-ի, թվով 25 ԸԸՀ-ներում ստացվել են 159 ընտրական տեղամասերի արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ դիմումներ, որոնցից բավարարվել է 134-ը: Մնացած դիմումները ԸԸՀ-ները մերժել են այն հիմնավորմամբ, թե վերահաշվարկ պահանջելու ժամկետն անցել է:

Խնդիրն այն է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 40.2 հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքներն ընտրատարածքային

[21] http://www.osce.org/documents/odihr/2008/03/30090_hy.pdf

ընտրական հանձնաժողովում դադարեցվում են քվեարկության օրվանից հինգ օր հետո՝ ժամը 14:00-ին: Փաստորեն, առանձին դեպքերում նշված ժամկետային սահմանափակման առկայության պատճառով քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի ոչ բոլոր դիմումները կարող են բավարարվել:

Ընտրական օրենսգրքի 40.2 հոդվածի 8-րդ մասն ամրագրում է, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների վերահաշվարկներն իրականացնում է ըստ վերահաշվարկի պահանջի մասին դիմումների մուտքագրման հաջորդականության: Գործնականում այս նորմի հետ կապված առաջանում են որոշակի խնդիրներ: Թերևս, հարցն այդքան վիճահարույց չէր լինի, եթե Ընտրական օրենսգիրքն ամրագրեր, որ ԸԸՀ-ները վերահաշվարկն իրականացնում են ոչ թե ըստ դիմումների մուտքագրման հաջորդականության, այլ բավարարում են վերահաշվարկի պահանջ ներկայացրած բոլոր թեկնածուների դիմումները՝ որոշակի համամասնությամբ, կամ էլ սահմանվեր, որ առաջնահերթ քննարկվում են առավել շատ ձայներ հավաքած թեկնածուների վերահաշվարկի պահանջի մասին դիմումները: Կարող են քննարկվել նաև այլ տարբերակներ:

Հատկանշական է, որ այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաքելության երկրորդ միջանկյալ զեկույցում: Դիտորդները, մասնավորապես, արձանագրել են, որ որոշ դեպքերում, օրինակ՝ թիվ 1, 4, 13 ԸԸՀ-ներում հանձնաժողովը չի իրականացրել այլ թեկնածուների կողմից պահանջված վերահաշվարկը, քանի որ զբաղված է եղել Նախագահի միայն մեկ թեկնածուի՝ Արամ Հարությունյանի պահանջով իրականացվող վերահաշվարկով:

Բացի այդ, ըստ դիտորդական առաքելության, դիտարկված վերահաշվարկների մեծամասնությունը ցույց է տվել, որ առաջնային հաշվարկում կային անհամապատասխանություններ ու սխալներ, որոնց մի մասը նշանակալի էր և կասկածի տակ էր դնում ՏԸՀ-ների և ԸԸՀ-ների քաղաքական անկողմնակալությունը[22]:

2.3. Նախագահական ընտրություններին զուգահեռ հասարակության մեջ ձևավորված լարված մթնոլորտի շիկացմանն են նպաստել նաև ընտրությունների վերաբերյալ միջազգային դիտորդական առաքելությունների իրարամերժ դիրքորոշումները: Այսպես, օրինակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջազգային երկարաժամկետ դիտորդական առաքելության 2008 թ.-ի փետրվարի 20-ին հրապարակած նախնական եզրակացությամբ՝ «Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները Հայաստանում անցկացվեցին մեծապես երկրի միջազգային պարտավորություններին համապատասխան՝ չնայած հետագա բարելավումը անհրաժեշտ է՝ կապված դեռևս առկա մարտահրավերների հետ»: Մոտ 400 միջազգային դիտորդների դիտարկումների

[22] http://www.osce.org/documents/odihr/2008/03/30090_hy.pdf

ընդհանուր տպավորությունը փոխանցելով՝ ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգող Անն-Մարի Լիզինը նշել է, որ նախորդ ընտրությունների համեմատ կար առաջընթաց: «Նախորդ նախագահական ընտրությունների համեմատությամբ նշանակալի առաջընթաց է նկատվել՝ կապված ընտրական գործընթացի նախապատրաստման և իրականացման հետ»,- ներկայացրել է Եվրոպական խորհրդարանի առաքելության ղեկավար Մարի Անն Իսլեր Բեգինը[23]:

Միևնույն ժամանակ՝ ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի երկարաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար Գերտ Արենսը 2008 թ.-ի փետրվարի 29-ին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում ասել է. «Նախորդ ընտրություններին տված մեր գնահատականում մենք ասել ենք, որ այդ ընտրությունները մեծամասամբ համապատասխանել են եվրոպական չափանիշներին, այստեղ ասում ենք՝ ընտրությունները հիմնականում անցկացվել են երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան: Երբ անցած տարի՝ խորհրդարանական ընտրությունների դեպքում օգտագործում էինք «մեծամասամբ» բառը, ի նկատի ունեինք՝ 80-90 տոկոսով համապատասխանել են ընդունված չափանիշներին, իսկ այս անգամ օգտագործված «հիմնականում» բառը կարող է նշանակել՝ 51 տոկոս են համապատասխանել, 70 տոկոս, բայց ոչ ավելին»[24]:

Առնվազն տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ նման հեղինակավոր կազմակերպությունները կարող են միմյանց միանգամայն հակասող հայտարարություններ անել, ավելին՝ ներկայացնել այդ հակասություններն իրենց զեկույցներում:

Նշված հակասական հայտարարությունները կարող են պայմանավորված լինել ընդդիմության նեկայացուցիչների բավականին սուր գնահատականներով՝ ուղղված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությանը: Մասնավորապես, փետրվարի 23-ին տեղի ունեցած հանրահավաքի ընթացքում Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարել է, որ այդ կեցվածքն իրեն հիմք է տալիս եզրակացնելու, որ Արևմուտքին թերևս չի հետաքրքրում Հայաստանի ժողովրդավարությունը, ժողովրդավարական իշխանության, ինտելեկտուալ իշխանության առկայությունը, որովհետև նա չի ցանկանում, որ Հայաստանի իշխանությունն իր հետ խոսի հավասարը հավասարի հետ, այլ ցանկանում է, որ լինի թույլ և կամակատար իշխանություն[25]:

Զերծ մնալով քաղաքական մեկնաբանություններից՝ նշենք միայն, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նման հեղինակավոր կազմակերպություններն ուղղակի պարտավոր են հետևողական լինել իրենց հայտարարություններում և չենթարկվել այս կամ այն

[23] «Ազգ» օրաթերթ, փետրվարի 21, 2008 թ.:
[24] www.a1plus.am, փետրվարի 29, 2008 թ.:
[25] www.lragir.am, փետրվարի 23, 2008 թ.:

քաղաքական ուժերի ազդեցություններին: Վերը բերված մեջբերումից անհասկանալի է մնում, որ եթե մի դեպքում ասվում է, որ «նախորդ ընտրությունների համեմատությամբ նկատվել է նշանակալի առաջընթաց» և ընդամենը ինն օր հետո ասվում է, որ «նախորդ ընտրությունների դեպքում օգտագործում էինք «մեծամասամբ» բառը, ի նկատի ունեինք՝ 80-90 տոկոսով համապատասխանել են ընդունված չափանիշներին, իսկ այս անգամ օգտագործված «հիմնականում» բառը կարող է նշանակել՝ 51 տոկոս են համապատասխանել, 70 տոկոս, բայց ոչ ավելին», ապա ինչ առաջընթացի մասին են խոսում եվրոպական բարձրաստիճան պատասխանատու պաշտոնյաները[26]: Եվ հակառակը, եթե գործնականում առաջընթաց եղել է, ապա ինչո՞ւ խորհրդարանական ընտրությունների ժամանակ օգտագործվել է «մեծամասամբ» տերմինը, իսկ նախագահական ընտրությունները գնահատելիս՝ «հիմնականում» տերմինը: Մեզ համար անհասկանալի է նաև, թե ինչպես կարելի է ընտրական առաջընթացը բնութագրել տոկոսներով:

2.4. Քվեարկության օրվա ընդհանուր պատկերի վրա իր ազդեցությունը թողեց ոչ միայն հասարակության պառակտվածությունը և տիրող անհանդուրժողականության մթնոլորտը, այլև ընտրական օրենսդրության ևս մեկ անկատարությունը: Խոսքը, մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված ընտրական հանձնաժողովների ձևավորման կարգի մասին է:

Ընտրական գործընթացի պատշաճ վարչարարության ապահովման կարևորագույն նախապայմաններից է անկախ և անկողմնակալ ընտրական հանձնաժողովների առկայությունը: Այս առումով պետք է նշենք, որ թեև ՀՀ ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովների ձևավորմանը վերաբերող դրույթները արժանացել են միջազգային կառույցների դրական գնահատականին, այնուամենայնիվ, ինչպես 2007 թ. խորհրդարանական, այնպես էլ 2008 թ. նախագահական ընտրությունների դիտարկման արդյունքները վկայում են այդ դրույթների հետագա քննարկման և վերանայման անհրաժեշտության մասին:

ԵԽ-ի Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքում ընդգծվում է, որ միայն թափանցիկությունը, անկողմնակալությունն ու քաղաքականորեն պատճառաբանված մանիպուլյացիայից անկախությունը կապահովեն ընտրական գործընթացի ճիշտ վարչարարություն՝ նախընտրական փուլից մինչև արդյունքների ստացումը: Այս առումով, կանոնագրքի բացատրական զեկույցում նախատեսվում է, որ այն պետություններում, որտեղ վարչական իշխանություններն ունեն քաղաքական իշխանություններից անկախ լինելու երկարատև ավանդույթ, ընտրությունները կարող են կազմակերպվել վարչական իշխանությունների

[26] «Ազգ» օրաթերթ, փետրվարի 21, 2008 թ.:

կողմից և վերահսկվել Ներքին գործերի նախարարության կողմից: Սակայն այն պետություններում, որոնք բազմակարծ ընտրությունների կազմակերպման քիչ փորձ ունեն, ընտրական հանձնաժողովները պետք է ձևավորվեն հիմնականում խորհրդարանում արդեն ներկայացված կուսակցությունների կողմից:

Պետք է նկատել, որ հենց այս մոտեցումն է արտահայտված ՀՀ ընտրական օրենսգրքում: Այնուամենայնիվ, փորձը ցույց տվեց, որ ընտրական հանձնաժողովների ձևավորման քաղաքական սկզբունքն ի զորու չէ ապահովելու ընտրական գործընթացի պատշաճ վարչարարություն:

Ստեղծված իրավիճակից ելքը, թերևս, ընտրական հանձնաժողովների ձևավորման վերոնշյալ երկու մոդելների համադրման մեջ է: Այսպես, վարչական մարմինները կարող են իրականացնել ընտրական վարչարարություն, իսկ խորհրդարանում ներկայացված կուսակցություններից ձևավորված դիտորդական հանձնաժողովները՝ վերահսկողություն համապատասխան մարմինների գործունեության նկատմամբ: Իհարկե, բարձրացված խնդիրը առավել խորը և բազմակողմանի ուսումնասիրության, ինչպես նաև համապատասխան օրենսդրական լուծումների մշակման կարիք ունի:

ԲԱԺԻՆ 3

3.1. Հետընտրական զարգացումները սկիզբ առան փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների քվեարկության օրվան հաջորդող ընդդիմության հանրահավաքից:

Քաղաքական տարբեր բևեռներում գործող ուժերը տրամագծորեն հակադիր մեկնաբանություններ էին տալիս փետրվարի 19-ին կայացած ընտրությունների, դրա ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Իշխանությունների ներկայացուցիչները պնդում էին, որ ընտրական գործընթացի թերությունները չեն կարող ստվեր գցել անցած ընտրությունների վրա, քանզի թերություններ արձանագրվում են ցանկացած տեղում անցկացվող յուրաքանչյուր ընտրության ժամանակ[27]: Ընդդիմության առաջնորդները, իրենց հերթին, սուր քննադատության էին ենթարկում ընտրական գործընթացի բոլոր փուլերը և հատկապես՝ քվեարկության արդյունքների ամփոփումը և հաշվարկը[28]:

Միևնույն գործընթացի այդպիսի իրարամերժ գնահատականները՝ սկսած «ամենախայտառակից» մինչև «ամենահաջողված» ընտրությունները պետության պատմության մեջ, իշխանությունների, նրանց ներկայացուցիչների, տարբեր իշխանական ինստիտուտների հանդեպ անվստահության պայմաններում, նպաստեցին հասարակության ստվար զանգվածների կողմնորոշմանը հօգուտ ընդդիմության:

Քաղաքացիներից շատերը հակված էին անվերապահորեն ընդունելու հանրահավաքներում հնչող և ընդդիմադիր ԶԼՄ-ներով տարածվող իշխանությունների դեմ ուղղված բոլոր փաստարկները: Միևնույն ժամանակ՝ իշխանամետ քաղաքական գործիչների և ԶԼՄ-ների կողմից գործադրվող ջանքերը մարդկանց համոզելու, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված արդյունքները համապատասխանում են իրականությանը, շատ դեպքերում քաղաքացիների կողմից ընկալվում էին որոշակի վերապահումներով, քանի որ օբյեկտիվ տեղեկատվության դեպրիվացիայի արդյունքում վստահությունն իշխանության հանդեպ օրեցօր նվազում էր:

Նման պայմաններում ավելի ազդեցիկ էր դառնում զանազան ասեկոսեների տեսքով շրջանառվող տեղեկատվությունը, սրվում էր մարդկանց զգայունությունը բացասական ազդակների նկատմամբ, ինչը նպաստում էր հասարակության մեջ հետընտրական առաջին շաբաթում ընդհանուր լարվածության ավելացմանը:

Փորձելով հաղթահարել տեղեկատվական բացն ընդդիմության գործողությունների մասին՝ մարդիկ շարունակում էին մասնակցել հանրահավաքներին, որոնք

---

[27] Տես, օրինակ, ՀՀԿ և ԲՀԿ խմբակցությունների հայտարարությունը. www.lragir.am վեբ-կայքում, 24.02.2008 թ.:

[28] Տես, օրինակ, «Հայկական ժամանակ» - փետրվարի 21, 2008 թ.:

իշխանությունները գնահատում էին որպես «չարտոնված, հակաօրինական», սակայն այդ հանրահավաքները մնում էին բոլորի ուշադրության կենտրոնում:

Հեռուստաընկերությունների կողմից ընդդիմության հանրահավաքների լուսաբանումը իրականացվում էր ընդգծված բացասական լույսի ներքո: Մինչդեռ, հանրահավաքների ընթացքում իշխանությունների հասցեին հնչած քննադատության չլուսաբանումը, որոշ վերլուծաբանների կարծիքով, հանգեցրեց հանրահավաքի մասնակիցների քանակի զգալի ավելացմանը: Հանրահավաքների ընթացքում հնչած քննադատությանը և մեղադրանքներին զուգահեռ, հեռուստաընկերությունները շարունակում էին ներկայացնել միայն իշխանամետ ներկայացուցիչների քննադատական հաղորդումները և հարցազրույցները:

Ընդդիմադիր գործիչները, իրենց հերթին, հմտորեն օգտագործեցին ստեղծված իրավիճակը: Նախընտրական և հետընտրական ժամանակահատվածների քարոզչության համադրումը ցույց է տալիս, որ նախընտրական շրջանի քարոզչությունը միտված էր հենց հետընտրական զարգացումներին: Փետրվարի 20-ից մինչև 29-ը ընկած ժամանակահատվածում Ազատության հրապարակում կատարված քարոզչության մեջ հստակ առանձնանում են իշխանությունների կողմից ժողովրդի վրա բռնության, ընտրակեղծիքների, «ժողովրդի թեկնածուի» տարած հաղթանակին տեր կանգնելու, գործող իշխանության նկատմամբ անհանդուրժողականության վերաբերյալ պնդումները:

Ելույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը հենված էր 88-ի ազգային-ազատագրական պայքարի բարձր հուզականության վերարտադրությանը: Սրանով ապահովվեց բարձր հուզականությունը հատկապես ընտրազանգվածի երիտասարդական շրջանում, որոնք տարիքի բերումով չէին մասնակցել Ղարաբաղյան շարժմանը («մենք գտնվում ենք ինֆորմացիոն բլոկադայի մեջ, բայց մենք 88-ին բազում բլոկադաներ ենք ճեղքել, հիմա էլ կճեղքենք», «ժողովուրդը պայքար է մղում բռնազավթիչների դեմ», «բայց մենք 88-ին վճռական գտնվեցինք...»[29] և այլն): Սրանով զանգվածի հուզականությունը ստացավ նոր ուղղվածություն, որը կապված էր Ղարաբաղյան շարժման, ազգային-ազատագրական պայքարի ասոցիացիաների հետ («մենք բոլորս միասին ենք», «այստեղ հավաքված է ամբողջ ժողովուրդը»[30]):

Այս շրջանում ՀՀ գործող իշխանությունների վերաբերյալ պնդումները հիմնականում նախընտրական շրջանի քարոզչության շարունակությունն էին: Այս համատեքստում քարոզչությունը ուղղված էր հասարակության և իշխանության միջև անջրպետի խորացմանը, ինչի նպատակով էլ կառուցվում էր իշխանության բացասական կերպարը («երկրի իրական տերը ոչ թե իշխանությունն է, այլ ժողովուրդը», «ՀՀ

[29] «Հայկական ժամանակ» - N 34 (1983), փետրվարի 22, 2008 թ.:
[30] «Հայկական ժամանակ» - N 33 (1982), փետրվարի 21; N 34 (1983), փետրվարի 22, 2008 թ.:

ժողովուրդը հաղթահարել է վախի մթնոլորտը»[31]): Զանգվածային հուզականության ֆոնը ավելի սրելու համար օգտագործվեցին զանգվածին «պատժելու» իրավունքով օժտելու ներշնչման միջոցները («Եթե այդ ժամկետները կսպառվեն, և մեր պահանջները չեն կատարվի, մենք իրար հետ կանենք այն, ինչ պետք է անենք», «որևէ մեկը չի կարող մեզ կանգնեցնել», «ժողովուրդն ինքը պետք է գտնի կամք պատժելու այդ հանցագործներին»[32]):

Թերևս իշխանության ներկայացուցիչները և իշխանամետ լրատվամիջոցները թերագնահատում էին թե՛ ընդդիմադիր տրամադրված ընտրողների քանակը և թե՛ նրանց վճռականության աստիճանը՝ շարունակելու քաղաքական պայքարը բոլոր միջոցներով: Կարծես նրանք հույս ունեին, որ Լ. Տեր-Պետրոսյանին համակրողները «շուտով կհոգնեն ձանձրույթից և կգնան իրենց տները» և այդպիսով իրավիճակը ինքնին կհանգուցալուծվի: Ընդդիմության գործիչները որակվում էին որպես շահադիտական, հակահայկական, ագրեսիվ միտումներով լի, և ընդգծվում էր նրանց օրինապահ մարմինների միջոցով հակազդելու անհրաժեշտությունը:

Հասարակության մեջ առկա բևեռացումը խորացավ նաև տարբեր մասնագետների՝ հոգեբանների, սոցիոլոգների, քաղաքագետների և ուրիշների միակողմանի մեկնաբանությունների պատճառով, որոնք հանրահավաքներին մասնակցողներին վերագրում էին զանազան անհրապույր որակներ, ինչպիսին են, օրինակ, «զոմբիացված», «չհասկացող», «կիսագրագետ», «անհաջողակներ», «ընտանիքում չբավարարված, հիստերիկ գծերով օժտված կանայք» և այլն[33]: Նման վերաբերմունքը պասիվ ընդդիմացող կամ ակտիվ դժգոհ ընտրազանգվածներին մղում էր ապացուցելու հակառակը, որ նրանք չեն պատկանում այդ խավերին, այլ իրոք արժանի են ուշադրության:

Հակադիր մղումների գերակշռության պայմաններում հասարակության մեջ շարունակում է աճել լարվածությունը: Նկարագրելով ՀՀ հետընտրական շրջանը՝ շատ քաղաքագետներ ձևակերպում են այն որպես «իշխանության և ընդդիմության միջև նյարդերի պայքար»: Կարծես թե երկու բևեռներն էլ սպասում էին, թե երբ կհատի հակառակ կողմի համբերությունը: Այս պայմաններում ԶԼՄ-ները շարունակում էին տրամադրել բևեռացված մեկնաբանություններով տեղեկատվություն, լիցքավորելով այն կտրուկ արտահայտություններով և սպառնալիքներով: Հոգեբանական տագնապի վիճակը հասարակության մեջ սրվում էր այդ օրերին ՀՀ-ում իշխանության կողմից ընդդիմադիր գործիչների, նրանց համախոհների կալանավորումների մասին տեղեկատվությամբ:

---

[31] «Հայկական ժամանակ» - N 33 (1982), փետրվարի 21; N 34 (1983), փետրվարի 22, 2008 թ.:
[32] «Հայկական ժամանակ» - N 33 (1982), փետրվարի 21; N 34 (1983), փետրվարի 22, 2008 թ.:
[33] «Հայաստանի Հանրապետություն» - փետրվարի 22, 2008 թ.:

Առաջացած անվստահության ֆոնի վրա հասարակության համար ոչ համոզիչ էին հնչում տարբեր հասարակական կազմակերպությունների, արվեստի, գիտության գործիչների հայտարարություններն ու կոչերը՝ բողոքը դադարեցնելու և հանդուրժողական լինելու վերաբերյալ: Հասարակության ծայրահեղ լարված իրադրությունում ՀՀ երկրորդ Նախագահի հայտարարությունները այն մասին, որ նա պատրաստ է Լ. Տեր-Պետրոսյանին աշխատանքի վերցնել իր աշխատակազմում, կամ նրա կողմից առաջարկված կոնֆլիկտի լուծման չորս հնարավոր տարբերակները ևս նպաստեցին հասարակության տարբեր շերտերում հուզական մեկնաբանություններին[34]:

Ցավեշտալին այն է, որ այս ամենը կրեց շարունակական բնույթ՝ թե՛ արտակարգ իրավիճակի ընթացքում և թե՛ դրա դադարեցումից հետո: Նման պայմաններում օրինաչափ են դիտվում նաև արտակարգ իրավիճակի ավարտից հետո Հայաստանի տարբեր շրջաններում ի հայտ եկող բողոքի զանգվածային դրսևորումները, որոնցում արտահայտվում են իշխանությունների անարդար գործողություններից դժգոհությունները:

Արմատական ընդդիմության վերնախավը, իր հերթին, շարունակում է քարոզարշավի և հետընտրական քարոզչության ընթացքում փորձարկված անհանդուրժողականությունը խորացնող տեխնոլոգիաների կիրառումը: Հենց վերջիններիս գործադրումը նպաստեց հասարակության մի հատվածի մոտ ՀՀ գործող իշխանությունների, իրավապահ մարմինների և առհասարակ իշխանության հետ առնչվող պետական ինստիտուտների նկատմամբ ձևավորված բացասական դիրքորոշումների խորացմանը, որոնք իրենց դինամիկայում ձեռք բերեցին հստակ էմոցիոնալ լարվածություն:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ այդպիսի դիրքորոշումների հիմքում ընկած են օբյեկտիվ գործոններ: Դրանց շարքում են՝

1. իշխանության գերկենտրոնացումը, հասարակության մի զգալի մասի նրանից օտարված լինելը,

2. քաղաքացիական ազատությունների ոչ լիարժեք լինելը,

3. սոցիալ-տնտեսական բևեռացումը,

4. տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակ լինելը,

5. խոսքի ազատության ոչ լիարժեք ապահովված լինելը,

6. մարդու իրավունքների՝ բարձրագույն արժեք հանդիսանալու սկզբունքի ձևական բնույթը:

Վերը շարադրվածի գլխավոր ընդհանրացումը թերևս այն է, որ դիտարկվող ժամանակահատվածի իշխանությունները, ձևավորելով արտոնյալ՝ յուրայինների և

[34] http://news.president.am/arm/?sub=statements&id=202&from=0&year=2008
«Հայաստանի Հանրապետություն» - փետրվարի 27, 2008 թ.:

հասարակության մնացած մասի փակ համակարգ, քաղաքական պայքարի որևէ հնարավորություն չթողեցին ոչ միայն ընդդիմությանը, այլև այլ ձևով մտածողներին: Ձևական բնույթ ունեին իշխանության կազմակերպման ժողովրդավարական սկզբունքները: Ընդդիմությունը որդեգրեց նույն ծայրահեղական միջոցները՝ դուրս գալով փողոց (ստիպված) և հասարակությունը բևեռացնելով «մենք»-ի և «ոչ-մենք»-ի: Արդյունքում, թե իշխանության մի մասի, թե ընդդիմության մի մասի ծայրահեղականությունից տուժեց հասարակությունը, քանի որ մարտի 1-2-ի իրադարձությունները հնարավոր դարձան հենց այդ ծայրահեղական միջոցների գործադրման արդյունքում: Այդ իսկ պատճառով հասարակությունը իրավունք ունի պահանջատեր լինելու երկրի քաղաքական վերնախավից (և՛ իշխանության, և՛ ընդդիմության) իր իրավունքների և ազատությունների պաշտպանվածության համար: Այս առումով, ներկայիս քաղաքական վերնախավի հիմնական առաքելությունը՝ հասարակությունում հանդուրժողականության մթնոլորտի ձևավորումն է:

3.2.1. Ազատության հրապարակի օպերացիան (մարտի 1, ժամը 6:40)

Մարտի 1-ի իրադարձությունները սկսվեցին Ազատության հրապարակում խաղաղ նստացույցը բռնի կերպով դադարեցնելուց[35]: Առավոտյան, ժամը 6:40-ին ոստիկանության աշխատակիցները պաշտպանողական հանդերձանքով, վահաններով և մահակներով հարձակվեցին Ազատության հրապարակում գտնվող ցուցարարների վրա:

ՀՀ գլխավոր դատախազի՝ Ազգային ժողովի 4 պատգամավորներին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն տալու մասին ԱԺ մարտի 4-ին ներկայացված միջնորդագրում ասված է. «Փետրվարի 29-ին ՀՀ ոստիկանությունում և ազգային անվտանգության ծառայությունում հավաստի օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Լ. Տեր-Պետրոսյանի համախոհները նախապատրաստվում են սադրիչ գործողությունների իրականացմամբ մարտի 1-ին մայրաքաղաքում հրահրել զանգվածային անկարգություններ, և այդ նպատակով Ազատության հրապարակում ընթացող նստացույցի մասնակիցներին պետք է բաժանվեն մեծ քանակությամբ մահակներ, մետաղյա ձողեր, պայթուցիկ նյութեր, ինչպես նաև հրազեն և նռնակներ: Իրավիճակը վտանգազերծելու նպատակով մարտի 1-ին վաղ առավոտյան ոստիկանության կողմից ձեռնարկվել է հանրավտանգ այդ նյութերն առգրավելուն ուղղված օպերատիվ միջոցառում, սակայն համապատասխան զննություն կատարելու հնարավորություն տալու կոչին ի պատասխան, նստացույցի մասնակիցները կատաղի հարձակում են գործել իրենց ծառայողական պարտականությունները կատարող

[35] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը երկրում ստեղծված իրավիճակի վերաբերյալ», 2-րդ կետ, 03/03/2008 թ., http://ombuds.am/main/am/9/18/1281/

իրավապահների նկատմամբ: Ամբոխից ոստիկանների վրա սկսել են նետել նախապես պատրաստված քարեր, փայտի կտորներ, մետաղյա ձողեր, բռնկուն նյութերով շշեր, ինչը զուգորդվել է իրավապահներին ուղղված հայհոյանքներով, իշխանությունը բռնությամբ տապալելու կոչերով: Ստեղծված իրավիճակից ելնելով, տեղում օպերատիվ որոշում է կայացվել օրենքով նախատեսված շրջանակներում համապատասխան միջոցներ ձեռնարկելու, որից հետո միայն ոստիկանության աշխատակիցներին հաջողվել է հաղթահարել զինված դիմադրությունը»[36]:

Մարտի 1-ի առավոտյան իրադարձության իրավական գնահատականը ենթադրում է հետևյալ հիմնահարցերի վերլուծություն.

Ա) Ազատության հրապարակում տասնօրյա նստացույցի օրինականությունը:

Բ) Մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում զենքի կուտակման առկայության վարկածը, ինչը հիմք է քրեադատավարական օրենսդրության կիրառման համար:

Գ) Ոստիկանության լիազորությունները և նրա գործողությունների համաչափությունը:

Ա) Հանրահավաքի օրինականությունը (փետրվարի 20 - մարտի 1, Ազատության հրապարակ)

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք: Այս իրավունքի իրացման գործընթացը կարգավորվում է «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» 2005 թ. նոյեմբերի 19-ի ՀՀ օրենքով (այս խմբագրությամբ օրենքը գործել է մինչև 2008 թ. մարտի 19-ը): Մասնավորապես, այդ օրենքի 10-12-րդ հոդվածները սահմանում են հրապարակային միջոցառում անցկացնելու մասին իրազեկման բովանդակությունը, այն ներկայացնելու և քննարկելու կարգը[37]: Նստացույցի հենց առաջին օրը ՀՀ Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի անդամ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ նստացույցն իրականացվում է իր և Արարատ Զուրաբյանի նախաձեռնությամբ, որին ինքնաբուխ միանում են հազարավոր ՀՀ քաղաքացիներ: Լ. Տեր-Պետրոսյանի շտաբը, հիմնվելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր

---

[36] ՀՀ գլխավոր դատախազություն; Գերատեսչական փաստաթղթեր; Միջնորդագիր՝ ՀՀ ԱԺ 4 պատգամավորներին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն տալու մասին, 04/03/2008 թ., http://www.genproc.am/main/am/23/3469/

[37] Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Կազմակերպիչները զանգվածային հրապարակային միջոցառումներ անցկացնելու մասին գրավոր իրազեկում են զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման վայրի համայնքի ղեկավարին, Երևանում՝ Երևանի քաղաքապետին: Իրազեկումը համարվում է օրինական և քննարկման ենթակա, եթե ներկայացված է միջոցառումն անցկացնելու նախատեսված օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, և ոչ շուտ, քան քսան օր առաջ: Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ իրազեկման քննարկման արդյունքում, եթե բացակայում են 13-րդ հոդվածում նշված հանգամանքները, զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման մասին իրազեկումն ընդունվում է ի գիտություն և միջոցառումն անցկացվում է իրազեկման մեջ նշված վայրում և ժամին:

անցկացնելու մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի վրա, պնդում է, որ իրազեկում չէր պահանջվում, քանի որ կազմակերպվել էր ոչ զանգվածային միջոցառում, որն ինքնաբուխ վերածվեց զանգվածային հրապարակային միջոցառման[38]: Հարկ է նկատել, որ հանրահավաքին կազմակերպվածություն տալու և այն զանգվածային դարձնելու մտադրության մասին է վկայում այն փաստը, որ Լ. Տեր-Պետրոսյանին սպասարկող մամուլը, ինտերնետային կայքերը պարբերաբար խրախուսել և ոգևորել են ՀՀ քաղաքացիների մասնակցությունը այդ հանրահավաքներին: Ավելին, որոշված էր կոնկրետ վայր (Ազատության հրապարակ) և ժամ (ժամը 15-ին), որտեղ ամեն օր կազմակերպվում էին հանրահավաքներ: Մինչդեռ, Երևանի քաղաքապետարանն այդպես էլ չի տեղեկացվել հանրահավաքի ավարտի մոտավոր ժամանակի, իրականացվող երթերի ուղու և մոտավոր ժամանակացույցի մասին, ինչպես նաև չեն ներկայացվել կազմակերպիչների անձնագրային կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի տվյալները: Ձևական առումով փետրվարի 21-ից մինչև մարտի 1-ը տևած հանրահավաքը չի համապատասխանել օրենքի պահանջներին, քանի որ չի իրազեկվել Երևանի քաղաքապետը, և վերջինս ի գիտություն չի ընդունել հանրահավաք անցկացնելը: Դրա հետ մեկտեղ, հազարավոր քաղաքացիներ ինքնաբուխ օրվա ցանկացած ժամին գալիս էին Ազատության հրապարակ վիճարկելու ընտրությունների անցկացման կարգն ու պաշտոնական արդյունքները, ինչը շոշափում է ՀՀ բոլոր քաղաքացիների շահերը և իրենց ազատ կամահայտնությամբ իշխանություն ձևավորելու կոլեկտիվ իրավունքը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հաշվետվության մեջ ուղղակիորեն նշվում է, որ «փետրվարի 21-ից մինչև մարտի 1 վաղ առավոտյան ցուցարարները կազմակերպել էին խաղաղ, թեև ոչ պաշտոնապես արտոնված հավաք Ազատության հրապարակում: Նրանք կազմակերպել են նաև բազմաթիվ խաղաղ երթեր: Փետրվարի 21-ի հանրահավաքների կազմակերպիչները հայտարարեցին, որ իրենց նպատակն է հասնել ընտրությունների չեղյալ համարելուն և դրանց վերացմանը: Իշխանություններն ընդհանուր առմամբ ընդունեցին բողոքի անցկացումը»[39]:

Ընտրությունների պաշտոնական արդյունքները չարժանացան ժողովրդի միանշանակ վստահությանը, ընդդիմադիր թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբը և ՀՀ Ազգային ժողովում այսօր արդեն միակ ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունը պաշտոնական հաղորդագրություններում ուղղակիորեն կասկածի տակ դրեցին

[38] Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ոչ զանգվածային հրապարակային միջոցառումը ինքնաբուխ վերածվել է զանգվածային հրապարակային միջոցառման, զանգվածային հրապարակային միջոցառումներ կարող են անցկացվել միայն լիազոր մարմնին գրավոր իրազեկելուց հետո:

[39] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ; Ընտրությունների դիտորդական առաքելություն. ՀՀ նախագահական ընտրություններ 2008; Հետընտրական զարգացումների միջանկյալ զեկույց, փետրվարի 20 - մարտի 3, 2008 թ., էջ 4: http://www.osce.org/documents/odihr/2008/03/30090_hy.pdf

ընտրությունների ելքը, հայտարարվեց, որ ընտրությունների ընթացքում մասսայական բնույթ է կրել ընտրակաշառքը, իրականացվել են բռնություններ, մարդկանց առևանգումներ, վեր հանվեցին վերահաշվարկի ընթացքում տեղ գտած մի շարք խախտումներ և այլն: Միաժամանակ, ՀՀ կառավարության մաս կազմող «Դաշնակցություն» կուսակցության թեկնածու Վահան Հովհաննեսյանն ի նշան ընտրությունների ընթացքում տեղ գտած խախտումների դեմ բողոքի հրաժարական տվեց Ազգային ժողովի փոխխոսնակի պաշտոնից[40]: Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու խնդրանքով ՀՀ սահմանադրական դատարան առաջինը դիմեց ՀՀ Նախագահի թեկնածու Տիգրան Կարապետյանը, իսկ փետրվարի 29-ին՝ ՀՀ Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանը: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվելու էր մինչև մարտի 8-ը, ինչն էլ ըստ էության հանդիսանում է ՀՀ ընտրական այս գործընթացի իրավական ավարտը:

Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած շարժումը կազմակերպեց ընտրակեղծիքների և բռնության դեմ բողոքի ակցիա և պահանջեց իրականացնել արդար վերահաշվարկ: 2008 թ.-ի փետրվարի 20-ից մինչև մարտի 1-ը Հայաստանի ժողովրդի մի ստվար զանգված հավաքվում էր Ազատության հրապարակում՝ խաղաղ վիճարկելու ընտրությունների անցկացման կարգն ու պաշտոնական արդյունքները: Նշված հանրահավաքներն ընտրական գործընթացի համատեքստում դիտարկել էր նաև ՀՀ երկրորդ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որն իր ասուլիսներից մեկում հայտարարել էր. «Չարտոնված հանրահավաքներն ինն օր շարունակ ոստիկանության կողմից չէին դադարեցվում միայն մեկ պատճառով, ես էի դա արգելում: Պատճառը վերահաշվարկի, բողոքարկման գործընթացն էր հետընտրական շրջանում: Ես կարծում էի, որ հանրահավաքների ցրումը կդիտվեր որպես այդ վերահաշվարկի կամ բողոքարկման գործընթացի խաթարման փորձ իշխանությունների կողմից»[41]:

Բ) Մարտի 1-ի միջոցառման քրեադատավարական վերլուծության իրավաչափությունը

«Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը տարբերակում է երկու առանձին գործընթացներ՝ հրապարակային միջոցառման դադարեցման որոշման ընդունումը և հրապարակային միջոցառման հարկադիր դադարեցման կարգը (համապատասխանաբար 14-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր): Նշված օրենքը հնարավորություն է ընձեռում ոստիկանությանը հրապարակային

[40] Այս մասին տես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ; Ընտրությունների դիտորդական առաքելություն. ՀՀ նախագահական ընտրություններ 2008; Հետընտրական զարգացումների միջանկյալ զեկույց, փետրվարի 20 - մարտի 3, 2008; http://www.osce.org/documents/odihr/2008/03/30090_hy.pdf; ԵԱՀԿ-ում ԱՄՆ պատվիրակության 2008 թ. փետրվարի 28-ի հայտարարությունը: www.osce.usmission.gov

[41] ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի մամուլի ասուլիսը, 20/03/2008; http://news.president.am/arm/?sub=press&id=104&year=2008

միջոցառումը դադարեցնելու մասին որոշում ընդունել, եթե, ասենք, զանգվածային հրապարակային միջոցառումն անցկացվում է առանց իրազեկման, սակայն նույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ ոստիկանությունը իրավունք ունի հարկադիր դադարեցնելու հավաքը, եթե այդ հավաքը իրական վտանգ է պարունակում անձանց կյանքի, առողջության, պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի համար, ինչպես նաև կարող է էական գույքային վնաս հասցվել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Ուստի մարտի 1-ի միջամտությունը հիմնավորվեց նրանով, որ փետրվարի 29-ին ոստիկանությունը, ինչպես նաև ազգային անվտանգության ծառայությունն օպերատիվ տեղեկատվություն էր ստացել, որ Ազատության հրապարակում առկա է զենքի կուտակում: Իրավիճակը վտանգազերծելու նպատակով մարտի 1-ի առավոտյան ոստիկանության կողմից ձեռնարկվեց հանրավտանգ այդ նյութերն առգրավելուն ուղղված օպերատիվ միջոցառում:

Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբը և Ազգային ժողովում ներկայացված «Ժառանգություն» ընդդիմադիր կուսակցությունը պնդում են, որ մարտի 1-ի առավոտյան իրադարձությունների նպատակն էր տեղազննություն իրականացնելու օպերացիայի շղարշի տակ բռնի կերպով դադարեցնել 10 օր շարունակ տևած խաղաղ հանրահավաքները, դուրս հանել այնտեղից նստացույցին մասնակցող քաղաքացիներին և արգելել հետագա հավաքները Ազատության հրապարակում:

Թե այս վարկածներից ո՞րն է ճիշտ՝ վերջնականապես ցույց կտա բազմակողմանի և լրիվ իրականացվող քննությունը: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել որոշակի հարցադրումներ:

- Որոշակի հակասություններ կան ՀՀ գլխավոր դատախազության հայտարարություններում: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազի մարտի 4-ին Ազգային ժողովի 4 պատգամավորներին որպես մեղադրյալ ներգրավելու և նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար համաձայնություն տալու վերաբերյալ ներկայացված միջնորդությունում նշվում է՝ «ոստիկանության նպատակն է եղել զենքը առգրավելուն ուղղված օպերատիվ միջոցառում, որը վերաճել է բախման»[42], իսկ մինչ այդ ՀՀ գլխավոր դատախազության մարտի 1-ի մամլո հաղորդագրությունում նշվում է այլ բան՝ ոստիկանության նպատակը մարտի 1-ի առավոտյան ժամը 6:00-ի սահմաններում եղել է հավաքը հարկադրաբար դադարեցնելը[43]: Ո՞րն է ճշմարտությունը:

---

[42] ՀՀ գլխավոր դատախազություն; Գերատեսչական փաստաթղթեր; Միջնորդագիր՝ ՀՀ ԱԺ 4 պատգամավորներին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն տալու մասին, 04/03/2008 թ., http://www.genproc.am/main/am/23/3469/

[43] Գլխավոր դատախազություն; Մամուլի հաղորդագրություն, ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ, 01/03/2008, http://www.genproc.am/main/am/16/3421/

- Վերոնշյալ մամլո հաղորդագրության և ՀՀ գլխավոր դատախազի՝ Ազգային ժողովին ուղղված միջնորդագրի միջև կա անհստակություն. մամլո հաղորդագրությունում նշվում է, որ «ոստիկանության և ցուցարարների ընդհարման ժամանակ վերջիններս օգտագործել են մահակներ, մետաղաձողեր և այլ հարմարեցված գործիքներ», իսկ միջնորդագրում օգտագործված առարկաների ցանկը արդեն ավելի մեծ է և ներառում է նաև «բռնկուն նյութերով շշեր», ինչը կարող է համարվել ռազմամթերք («Զենքի մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի «ը» կետը՝ նետվող հարմարանքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական լիցքեր)[44]: Բնական է, որ բռնկուն նյութերով շշերի առկայությունն ավելի շատ կվկայեր նրա մասին, որ ցուցարարները նախապես պատրաստել են զենքը, հետևապես այդ դեպքում հավաքը չէր կարող դիտվել որպես հավաք առանց զենքի: Ավելացնենք, որ ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Արարատ Մահտեսյանը և ՀՀ ոստիկանության պետի մամուլի քարտուղար Սայաթ Շիրինյանը մարտի 4-ին ԶԼՄ-ներին տրված ասուլիսի ժամանակ ևս մատնանշել են միայն մահակներ և երկաթյա ձողեր[45]:
- Մարտի 4-ին ՀՀ գլխավոր դատախազի՝ Ազգային ժողովին ուղղված միջնորդագրի տեքստից կարելի է եզրահանգել, որ առկա են եղել հավաստի տեղեկություններ հրազեն և նռնակներ բաժանելու մասին, ինչպես նաև ոստիկանության կողմից փորձ է արվել առգրավել այդ հանրավտանգ նյութերը և զննել տարածքը[46]: Նշված փաստերի առկայությունը բավարար հիմքեր է տալիս ենթադրելու, որ ապօրինի զենքի և նռնակների մասին տեղեկատվություն ստանալու պահից ծագել են քրեադատավարական հարաբերություններ, քանի որ ապօրինի զենքի և նռնակների բաժանումը համարվում է հանցագործություն: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը պարտավորեցնում է քրեական հետապնդումն իրականացնող մարմնին, տվյալ դեպքում ոստիկանությանը, հարուցել քրեական գործ, եթե ստացված տեղեկատվությունը կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին հավաստի է (քրեական գործի հարուցման հիմքեր), և տեղեկատվությունը ստացվել է տվյալ դեպքում ոստիկանության կողմից իր

---

[44] Ամբոխից ոստիկանների վրա սկսել են նետել նախապես պատրաստած քարեր, փայտի կտորներ, մետաղյա ձողեր, բռնկուն նյութերով շշեր, ինչը զուգորդվել է իրավապահներին ուղղված հայհոյանքներով, իշխանությունը բռնությամբ տապալելու կոչերով: ՀՀ գլխավոր դատախազություն; Գերատեսչական փաստաթղթեր; Միջնորդագիր՝ ՀՀ ԱԺ 4 պատգամավորներին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն տալու մասին, 04/03/2008, http://www.genproc.am/main/am/23/3469/

[45] Սակայն, երբ ոստիկանության աշխատակիցները մտան այնտեղ, ցուցարարներն անմիջապես նրանց դիմավորեցին մահակներով և երկաթյա ձողերով: ՀՀ ոստիկանություն, Հանդիպում լրագրողների հետ, 04/03/2008, http://www.police.am/page.php?section=news&id=5214&lenguige=am&txt=

[46] ՀՀ գլխավոր դատախազություն; Գերատեսչական փաստաթղթեր; Միջնորդագիր՝ ՀՀ ԱԺ 4 պատգամավորներին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն տալու մասին, 04/03/2008, http://www.genproc.am/main/am/23/3469/

գործառույթներն իրականացնելիս (քրեական գործի հարուցման առիթ): Առաջանում են մի շարք հարցադրումներ, մասնավորապես՝ ինչո՞ւ ՀՀ ոստիկանությունը չէր հարուցել քրեական գործ ստացված տեղեկատվության փաստով[47]:

- Եթե ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության կողմից ստացված նյութերը հավաստի չէին, ինչն արդեն իսկ կհակասեր ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունում արված պաշտոնական հայտարարությանը, ապա այդ դեպքում միակ թույլատրելի քննչական գործողություններ են դեպքի վայրի զննությունը, փորձաքննության նշանակումը, փորձանմուշներ վերցնելը և անձնական խուզարկությունը: Պաշտոնական հաղորդագրության մեջ նշված է. «ոստիկանությունը ձեռնարկեց օպերատիվ գործողություն հանրավտանգ նյութերը առգրավելու նպատակով»: Եթե պետք է արվեր առգրավում, ապա քրեական գործն արդեն իսկ պետք է հարուցված լիներ: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն՝ տեղազննությունը որպես կանոն կատարվում է ցերեկը՝ ընթերակաների մասնակցությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 48-րդ կետի համաձայն՝ գիշերային ժամանակը 22.00-ից մինչև 7.00-ն է: Անհրաժեշտ է պարզել՝ մասնակցել են արդյո՞ք ընթերականեր և հիմնավորվել է արդյո՞ք քննչական գործողությունը գիշերային ժամերին կատարելու փաստը: Ազատության հրապարակի օպերացիան տեղի ունեցավ առավոտյան 6:40, ինչը խիստ զարմանալի է այն պարզ պատճառով, որ եթե ոստիկանությունը իսկապես իրականացնում էր քննչական գործողություն, ապա 6:40-ի փոխարեն պրակտիկայում ավելորդ հիմնավորումներից խուսափելու համար, քրեական հետապնդման մարմինը մի փոքր սպասում է և իրականացնում քննչական գործողությունը ժամը 7-ից հետո:
- Անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք հանրահավաքի մասնակիցներին ներկայացվել է տեղազննություն իրականացնելու հրապարակային պահանջ և ո՞ւմ կողմից: Անհրաժեշտ է պարզել՝ որևէ մեկը ներկայացե՞լ է որպես օպերացիայի համար պատասխանատու անձ, օգտագործել է արդյո՞ք հրապարակում տեղակայված բարձրախոսը տեղազննություն իրականացնելու պահանջը հայտարարելու նպատակով:
- Զննության ընթացքում քրեական վարույթն իրականացնող անձն ինքնուրույն կամ մասնագետի օգնությամբ վերցնում է հետքեր, իրեր, փաստաթղթեր, ինչպես նաև այլ առարկաներ, որոնք գործով կարող են ունենալ ապացուցողական

[47] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:

նշանակություն: Առնվազն տարօրինակ է՝ հայտնաբերված զենքերը ոստիկանների կողմից մերկ ձեռքերով վերցնելը, ինչը ցուցադրվեց Հանրային հեռուստատեսությամբ մարտի 1-ին: Կարծում ենք, որ այդ ոստիկանների անփութության հետևանքով վերացվեցին զենքերի վրա առկա հետքերը, ինչը միանշանակ չի բխում հետագայում արդեն հարուցված քրեական գործի շահերից: Հիշեցնենք, որ քրեական դատավարության հիմնաքարն է անմեղության կանխավարկածը՝ մեղադրանքի ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը և այն չի կարող հիմնվել ենթադրությունների վրա:

- Մարտի 4-ին ոստիկանության պետի առաջին տեղակալ Արարատ Մահտեսյանը և ՀՀ ոստիկանության պետի մամուլի քարտուղար Սայաթ Շիրինյանը ԶԼՄ-ների ներկայացուցիչներին տրված ասուլիսի ժամանակ հայտարարել են, որ մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում իրականացված գործողությունների բնույթը հետևյալն էր. «ոստիկանությունը պետք է գնար և հենց տեղում տեղազննություն կատարեր, իսկ վրաններում՝ խուզարկություններ»[48]: Ինչպե՞ս բացատրել դեռևս չհարուցված քրեական գործի շրջանակներում խուզարկություն-քննչական գործողության իրականացումը: Արդյո՞ք պահպանվել է խուզարկության անցկացման դատավարական կարգը:
- Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ տեղազննություն կատարելու ոստիկանների փորձին ի պատասխան նստացույցի մասնակիցները կատաղի հարձակում են գործել իրենց ծառայողական պարտականությունները կատարող իրավապահների նկատմամբ: Ստեղծված իրավիճակից ելնելով, տեղում օպերատիվ որոշում է կայացվել օրենքով նախատեսված շրջանակներում համապատասխան միջոցներ ձեռնարկել: Առաջանում է տրամաբանական հարց՝ ինչպե՞ս պատահեց, որ առավոտյան 6:30-ի սահմաններում բոպեների ընթացքում ոստիկանությանը հաջողվեց մոբիլիզացնել բազմաթիվ ստորաբաժանումներ՝ պաշտպանողական հանդերձանքով, վահաններով և մահակներով, որոնք հարձակվեցին ցուցարարների վրա, եթե այս ամենի նպատակը միայն տեղազննության կատարումն էր:
- Հաշվի առնելով իրավիճակի խիստ քաղաքականացված լինելը՝ իրավապահ մարմինները ենթադրաբար պետք է նկարահանած լինեին օպերացիան, մասնավորապես դրա սկիզբը, հատկապես եթե հաշվի առնենք, որ իրենց հետ եկել էին օպերատորներ, որոնք հետագայում նկարահանեցին առգրավված զենքը: Ուստի, հատուկ ուշադրությամբ պետք է վերծանել նրանց կողմից նկարահանված

[48] ՀՀ ոստիկանություն, Հանդիպում լրագրողների հետ, 04/03/2008, http://www.police.am/page.php?section=news&id=5214&lenguige=am&txt=

օպերացիայի սկսման պահը: Այս առնչությամբ մտահոգիչ է մարտի 1-ի առավոտյան այդ տարածքում նկարահանումներ կատարած «Ա1+»-ի, «Երկիր մեդիա»-ի տեսաերիզների բռնագրավումը, «ԱԼՄ»-ի տեսախցիկի ջարդումը: Ավելին, «Առավոտ»-ի արտահաստիքային լուսանկարիչ Գագիկ Շամշյանից ծեծելով խլել են նրա նկարահանած կադրերը[49]: Ի՞նչ էր թաքցնում ոստիկանությունը: Եթե ամեն ինչ եղել էր օրենքի շրջանակներում, հենց ոստիկանությունը առաջին հերթին պետք է շահագրգիռ լիներ, որ ամեն ինչ նկարահանվեր և լուսաբանվեր:

- «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները (շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում, համեմատական հետազոտումների նմուշների հավաքում և այլն) կարող են կատարվել նաև մինչև քրեական գործի հարուցումը, ինչպես ոստիկանության, այնպես էլ ազգային անվտանգության ծառայության մարմինների կողմից: Նույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը արգելում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու մասին որոշմամբ: Ավելին, նշված օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման նկատմամբ անմիջական վերահսկողություն է իրականացնում այդ միջոցառումներն անցկացնելու մասին որոշում կայացրած պաշտոնատար անձը, որն անձնական պատասխանատվություն է կրում օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման օրինականության համար: Անհրաժեշտ է պարզել, թե ո՞վ է ներգրավել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներին, ինչպիսի՞ օպերատիվ-հետախուզական գործողություններ էին նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու որոշման մեջ, ո՞վ է իրականացրել նշված օպերացիայի ողջ նախապատրաստությունը, ղեկավարել ընթացքը և իրականացրել վերահսկողությունը: Այս առումով «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարները պարտավոր են նրան ներկայացնել այդ միջոցառումների

[49] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը երկրում ստեղծված իրավիճակի վերաբերյալ», 03/03/2008: www.ombuds.am:

անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

- Ինչո՞վ է պայմանավորված ՀՀ ԱԱԾ պետական պահպանության ծառայության պետ Գրիգորի Սարկիսյանի մասնակցությունը Ազատության հրապարակի այս միջոցառմանը: Ավելին, պետք է պարզել՝ արդյո՞ք նա է ղեկավարել մարտի 1-ի Ազատության հրապարակի օպերացիան և ինչո՞վ է պայմանավորված տեղազննության շրջանակներում ՀՀ առաջին Նախագահին բռնի, ինչպես պաշտոնաթող Նախագահն ինքն է հայտարարել, դեպի իր առանձնատուն ուղեկցելը և այնտեղ «տնային կալանքի» տակ պահելը:
- Մամուլում բազմիցս նշվել և մինչ օրս չի հերքվել, որ միջոցառմանը մասնակցել են ՀՀ ոստիկանության զորքերը: Համաձայն «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ ոստիկանության զորքերի գործունեությունն իրականացվում է միանձնյա ղեկավարման սկզբունքի հիման վրա, իսկ նույն օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ ոստիկանության զորքերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ ոստիկանության պետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ ոստիկանության զորքերի հրամանատարը: Անհրաժեշտ է պարզել՝ եղել է արդյո՞ք ՀՀ ոստիկանության զորքերը ներգրավելու մասին որոշում, ինչպես նաև՝ ո՞վ է անմիջական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձը: Հարկ է նշել, որ «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է, որ խաղաղ, առանց զենքի ժողովները, հանրահավաքները, երթերն ու ցույցերը կանխելու համար ոստիկանության զորքերի ներգրավումն արգելվում է:
- Մարտի 1-ի առավոտյան, ապա նաև նույն օրը Ֆրանսիական դեսպանատան շրջակայքում օրվա առաջին կեսում որևէ կրակոց չի արձակվել: Որևէ հրազեն չի կիրառվել ցուցարարների կողմից: Ըստ ՀՀ գլխավոր դատախազության մարտի 1-ի հաղորդագրության՝ առավոտյան Ազատության հրապարակում հայտնաբերվել են նռնակներ, ինչը թույլ է տալիս մտածել՝ ինչո՞ւ դրանք չեն օգտագործվել: Եթե, ինչպես ներկայացնում է Հանրային հեռուստատեսությունը, փախչող ցուցարարները իրենցից հետո ատրճանակներ են թողել, ապա ինչպես եղավ, որ նրանց ցրելու ժամանակ, որն ուղեկցվել է ծեծով և դիմադրությամբ, ոչ մի կրակոց չեղավ: Ավելին, ցուցարարները նույն օրը Ֆրանսիական դեսպանատան մոտակայքում քարեր և նմանատիպ իրեր էին հավաքում «զինվելու» նպատակով:
- Փետրվարի 29-ին ՀՀ երկրորդ Նախագահի ԵՊՀ-ում արված հայտարարությունը առ այն, որ առկա լուծումներից է ոստիկանների կողմից «հրապարակի մաքրումը»: Նա հայտարարեց. «Տարբերակ առաջին. համբերատար սպասել, երբ է թատերական բեմադրությունը ինքն իրենով մարվելու, տարբերակ երկրորդ՝

ոստիկանական գործողություններ կիրառելով, մաքրել այդ հրապարակը, ժողովրդին հնարավորություն տալ ավելի հանգիստ ապրել, կարծում եմ, այսօր մեծ աջակցություն կլինի առաջին հերթին հենց այնտեղ հավաքված մոլորված անձանց համար, որովհետև տարբեր հնարքներով իրենց այնտեղ պահում են»[50]: Ընդ որում, ՀՀ-ում ոստիկանության, ազգային անվտանգության ծառայությունները փաստացի գտնվում են ՀՀ Նախագահի վերահսկողության ներքո: Ավելին, իշխանական մամուլն օրեր շարունակ հայտարարում էր, որ անհրաժեշտ է մաքրել Օպերայի հրապարակը: Հարկ է հիշատակել ԵԱՀԿ վերը նշված միջանկյալ ցեկույցից մի դրվագ. «Փետրվարի 23-ին Նախագահ Քոչարյանը հանդիպումներ է անցկացրել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության ղեկավարության հետ, որոնց ժամանակ նա խոսել է «իշխանությունը զավթելու ոչ լեգիտիմ փորձի» և հայտարարել երկրում սահմանադրական կարգի և կայունության պահպանմանն ուղղված «վճռական ու կտրուկ» գործողությունների մասին: Հաջորդ օրերին կալանավորվել են անձինք «զենք ապօրինի պահելու», «իշխանության ներկայացուցչի նկատմամբ ֆիզիկական բռնության գործադրման» և «սուտ մատնության» կասկածներով»[51]: ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հաղորդման ստուգման արդյունքում հարուցել էր արդյո՞ք քրեական գործ ՀՀ ոստիկանությունը պետական իշխանությունը յուրացնելու փորձի կամ ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերի հանցակազմերով:

Գ) Ոստիկանության լիազորությունները և նրա գործողությունների իրավաչափությունը

Ոստիկանության կողմից քննչական գործողություն, օպերատիվ-հետախուզական գործողություն կամ հանրահավաքը հարկադրաբար դադարեցնելիս կիրառված ցանկացած ուժ պետք է լինի անհրաժեշտ և հաշվի առնվի դրա համաչափությունը իրական վտանգին[52]:

- Ըստ ՁԼՄ-ների հրապարակումների՝ Ազատության հրապարակում օպերացիան սկսվեց այն պահին, երբ Լ. Տեր-Պետրոսյանը ավարտեց իր կոչը հրապարակում հավաքված ցուցարարներին՝ չընդվզել, հանգիստ մնալ և տեսնել, թե ի՞նչ է ուզում ոստիկանությունը: Ոստիկանները առանց նախազգուշացնելու ցուցարարների վրա

[50] ՀՀ Նախագահ; Ելույթներ; ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդիպումը ԵՊՀ ուսանողների հետ, 29/02/2008 ; http://news.president.am/arm/?sub=statements&id=202&from=0&year=2008

[51] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ; Ընտրությունների դիտորդական առաքելություն. ՀՀ նախագահական ընտրություններ 2008; Հետընտրական զարգացումների միջանկյալ զեկույց, փետրվարի 20 - մարտ 3, 2008, էջ 5: http://www.osce.org/documents/odihr/2008/03/30090_hy.pdf

[52] «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

սկսեցին ջուր լցնել, էլեկտրաշոկով խփել, իսկ այնուհետև հարվածում էին մահակներով: Բազմաթիվ ցուցարարներ խոշտանգվել են: Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է. ոչ մի բացառիկ իրադրություն, ինչպիսին էլ այն լինի՝ ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող հանդիսանալ խոշտանգումների արդարացում:

- Ըստ տարածված հրապարակումների՝ ոստիկանները ծեծի են ենթարկել անցորդների, այդ թվում անչափահասների:
- «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ և «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածները պարտավորեցնում են ոստիկաններին և ոստիկանության զորքերի ծառայողներին ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնությունը: Բազմաթիվ ականատեսների վկայությամբ՝ առանց շտապ բուժօգնություն ստանալու ուղղակի ձերբակալվում և ոստիկանատուն են տարվում բազմաթիվ վիրավոր քաղաքացիներ, այդ թվում արնածոր վերքերով անչափահասներ: Մարտի 1-ի առավոտյան 9:00-ի սահմաններում ՀՀ ոստիկանության Կենտրոն բաժանմունքի առջև նմանօրինակ դեպքերի ականատես եղան, իրենց խոսքերով, ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորները[53]:

Վերը թվարկված դեպքերի առնչությամբ հարկ է հիշատակել.

ա. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը արգելում է հատուկ միջոցների օգտագործում ակնհայտ հաշմանդամների, անչափահասների նկատմամբ, ինչպես նաև առանց զենքի չարտոնված հավաքները խափանելու ժամանակ, եթե դրանք չեն խախտում տրանսպորտի, կապի և կազմակերպությունների աշխատանքը:

բ. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքով չնախատեսված դեպքերում ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրումը կամ սահմանների անցումով դրանց գործադրումն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով: Ոստիկանների և ոստիկանության զորքերի ծառայողների կողմից վերը նշված հնարավոր բոլոր չարաշահումները մանրամասն պետք է ուսումնասիրվեն՝ վերծանելով օպերացիայի ողջ ընթացքն ամրագրած տեսաերիզները և ականատեսների (տուժողների) ցուցմունքները: Հատկանշական է, որ մինչ օրս որևէ ոստիկանի հանդեպ քրեական գործ չի հարուցվել անգամ սահմանների անցումով ֆիզիկական ուժի, հատուկ միջոցի գործադրման համար:

[53] «Ժառանգություն» կուսակցության հայտարարությունը, 01/03/08; http://www.heritage.am/pr/010308-1arm.htm

- Ազատության հրապարակում առկա էր ոստիկանների երկու շրջան. մեկն Ազատության հրապարակի վրա, մյուսը՝ հարող չորս փողոցների երկարությամբ[54]: Այս շրջանների նպատակն էր, որպեսզի որևէ մեկն այնտեղ չմտնի և հանրահավաքը ավարտվի: Այս առնչությամբ հարկ է հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած case law-ն, համաձայն որի՝ հանրահավաքներ անցկացնելու իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկն է և նրան մասնակցած որոշ անձանց կողմից կատարված իրավախախտումները չպետք է հիմք հանդիսանան մյուսներին այդ իրավունքից զրկելու համար:
- Ազատության հրապարակում հավաքված առնվազն ոչ բոլոր քաղաքացիներն էին ենթադրյալ հանցագործներ: Նրանց շարքերում շատ էին նաև ցուցարարները, հետևաբար՝ ոստիկանության կողմից իրականացված օպերացիան ուղղակիորեն հանգեցրեց նաև հանրահավաքը հարկադրաբար դադարեցնելուն: «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է՝ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի դադարեցնելու իր մասնակցությունը հրապարակային միջոցառումներին, և այն դադարեցվելու դեպքում անհապաղ պետք է հեռանա հրապարակային միջոցառման անցկացման վայրից: Ըստ ականատեսների՝ ցուցարարներին հետապնդել են շատ ավելի հեռու, քան Ազատության հրապարակը: Որոշ ականատեսներ պնդում են, թե սկզբում նույնիսկ օղակ բաց չի եղել և չի եղել հնարավորություն դուրս պրծնելու շրջափակումից: Այս հանգամանքները պետք է ուսումնասիրվեն, հատկապես վերծանելով կատարված նկարահանումները և հիմնվելով ականատեսների ցուցմունքների վրա:
- Ըստ վերը նշված օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ոստիկանության ներկայացուցիչը, մինչև հրապարակային միջոցառման հարկադիր դադարեցումը, հրապարակային միջոցառման դադարեցման պահանջի մասին պարտավոր է ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով տեղեկացնել մասնակիցներին՝ սահմանելով դադարեցման ողջամիտ ժամկետ: Այդ ժամկետում հրապարակային միջոցառումը չդադարեցվելու դեպքում ոստիկանությունն իրավունք ունի հարկադիր դադարեցնելու միջոցառումն օրենքով սահմանված միջոցներով: Ճիշտ է, մինչ այդ, ամեն օր ոստիկանները բարձրախոսներով հայտարարել են, որ հանրահավաքը անօրինական է, և խնդրել քաղաքացիներին դադարեցնել այն, սակայն մարտի 1-ի առավոտյան նման պահանջ չի ներկայացվել: Ցուցարարներին հանրահավաքը

[54] ՀՀ ոստիկանություն, Հանդիպում լրագրողների հետ, 04/03/2008 - Բնականաբար, ոստիկանությունը նաև շրջափակեց տարածքը, որպեսզի ցուցարարները չխանգարեն ոստիկանության աշխատանքներին: http://www.police.am/page.php?section=news&id=5214&lenguige=am&txt=

դադարեցնելու որևէ ժամանակ չի տրամադրվել: Կատարված նկարահանումների հիման վրա վերհանել, պարզել է արդյո՞ք ՀՀ գլխավոր դատախազությունը վերը նշված նորմի կիրառման փաստը կամ այն չկիրառելու պատճառները:

- Մարտի 1-ի առավոտվա իրադարձությունների առնչությամբ դեռևս անհայտ է, թե ինչպիսի հիմքեր են ստացվել, որոնք վկայել են Ազատության հրապարակում զենքի կուտակման մասին: Այս առնչությամբ՝ 1995 թ.-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մքքեն և ուրիշներ ընդդեմ Մեծ Բրիտանիայի» գործուում քննելով իրավապահ մարմինների կողմից ուժի կիրառման օրինականությունը հորդորել է, որպեսզի իշխանությունները ձեռնպահ մնան գործողություններ ձեռնարկելուց՝ հիմնվելով ոչ կատարյալ հիպոթեզների վրա[55]: Ավելին, փետրվարի 20-ից Լ. Տեր-Պետրոսյանի կողմից անցկացված բոլոր միջոցառումներն անցել են բացառապես խաղաղ պայմաններում, ինչն անգամ փաստել են միջազգային կազմակերպությունների բարձրագույն պաշտոնատար անձինք[56]: Այս առումով, «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը դատախազին իրավունք է վերապահում պահանջել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարներից ներկայացնելու այդ միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստերը: ՀՀ գլխավոր դատախազությունը արդյո՞ք ստացել է վերը նշված տեղեկատվությունը, ինչպես նաև գնահատել է արդյո՞ք դրանց հիման վրա կատարված տեղազննության շրջանակում իրականացված գործողությունների նպատակահարմարությունը և օրինականությունը:

3.2.2. Ֆրանսիական դեսպանատուն (մարտի 1, 11:30-ից)

Մարտի 1-ին ժամը 11-ի մոտակայքում ժողովուրդը սկսեց հավաքվել Ֆրանսիական դեսպանատանը հարակից հրապարակում: Մարդիկ հավաքվել էին իրենց անհամաձայնությունը և վրդովմունքը արտահայտելու առավոտյան կատարված իրադարձությունների առնչությամբ:

Մարտի 1-ի առավոտվա և օրվա երկրորդ կեսի իրադարձությունների փոխկապվածությունը ակնհայտ է: Անհնարին է մարտի 1-ի երկրորդ կեսին տեղի ունեցած դեպքերի քննությունը առանց առավոտյան հանրահավաքի մասնակիցների նկատմամբ

---

[55] Մքքեն և ուրիշներ ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 1995(A n 324):

[56] OSCE, Press release, Helsinki, 1 March 2008; www.osce.org/item/2996.html?print=1
US Mission to the OSCE, Statement on the Elections in Armenia. February 28, 2008. www.osce.usmission.gov
We applaud both the government and the opposition in Armenia for avoiding successfully any incidents of violence in the context of large political rallies on behalf of each the two top candidates. This peaceful exercise of the freedom of assembly, coupled with effective, non violent, crowd management, is a notable achievement and a sign of democratic progress.

կիրառված բռնության հետ պատճառական կապը հաշվի առնելու, և այս երկու իրադարձությունները հավասարապես պետք է քննվեն մեկ հարթության շրջանակներում:

Մարտի 1-ին, ժամը 11:15-ին Օպերայի մոտ գտնվող ոստիկանության և ոստիկանության զորքերի ջոկատները ուղղորդվեցին դեպի Ֆրանսիական դեսպանատուն: Մի քանի ուղղությամբ և մի քանի շարքերով կանգնած էին ոստիկանության զորքերի և այլ հատուկ ջոկատների ծառայողները: Որոշ «ոստիկանների» դեմքերը փակ էին, դիմակավորված: Ցուցարարների հանրահավաքը ցրելու փորձին մասնակցում էին նաև ՀՀ ոստիկանության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության աշխատակիցները:

Ցուցարարների մեջ բազմաթիվ սադրիչներ ամեն կերպ ջանում էին հրահրել ոստիկանության հետ բախումներ: Մանրակրկիտ պետք է հետազոտվեն նմանատիպ բոլոր հայտարարությունները, ականատեսների վկայությունները:

Ի տարբերություն նույն օրվա առավոտյան Ազատության հրապարակի միջոցառման, որի նկատմամբ կիրառելի էր քրեադատավարական օրենսդրությունը (զենքի կուտակման վարկած), Ֆրանսիական դեսպանատան մոտակայքում այդ ժամանակ տեղի ունեցած ուժային միջամտության նկատմամբ անհրաժեշտ է կիրառել բացառապես «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, մասնավորապես՝ հանրահավաքը դադարեցնելու կարգին, ինչպես նաև հատուկ միջոցների կիրառմանը վերաբերող դրույթները: Ոստիկանությունն իրավունք ունի հարկադիր դադարեցնելու հավաքը, եթե այդ հավաքը իրական վտանգ է պարունակում անձանց կյանքի, առողջության, պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի համար, ինչպես նաև կարող է էական գույքային վնաս հասցվել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Հետևաբար՝ մարտի 1-ի ժամը 12-ի մոտակայքում ոստիկանների կողմից կիրառված ֆիզիկական ուժը պետք է դիտարկել անօրինական, քանի որ պաշտոնապես չներկայացվեց և չհիմնավորվեց, որ քաղաքացիների հավաքը Ֆրանսիական դեսպանատան մոտակայքում իրական վտանգ էր սպառնում վերոնշյալ արժեքներին: Ավելին, մինչև ժամը 14:00-ը, հանրահավաքը ընթանում էր խաղաղ և դեռ կիրառելի չէր նշված օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետը, համաձայն որի՝ հրապարակային միջոցառման դադարեցման կարգը չի կիրառվում, եթե հրապարակային միջոցառման անցկացման վայրում սկսվել են զանգվածային անկարգություններ, որոնք պահանջում են իրավիճակից բխող հրատապ միջոցառումների իրականացում: Ինքնաբուխ հավաքների նկատմամբ օրենքն իրազեկում չէր էլ պահանջում:

Անօրինական պետք է համարել նաև ՀՀ ոստիկանության զորքերի ներգրավումը մարտի 1-ի կեսօրին Ֆրանսիական դեսպանատան մոտակայքում հավաքված

քաղաքացիներին ցրելու փորձին, քանի որ «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը ուղղակիորեն սահմանում է, որ խաղաղ, առանց զենքի ժողովները, հանրահավաքները, երթերն ու ցույցերը կանխելու համար ոստիկանության զորքերի ներգրավումն արգելվում է: Այս առնչությամբ ՀՀ ոստիկանության զորքերի շտաբի պետ, գնդապետ Գեղամ Պետրոսյանը հեռուստատեսային ելույթի ժամանակ, առանց որևէ մանրամասնության, նշել է. «Օրվա ընթացքում մենք իրականացնում էինք մեր ծառայությունը մայրաքաղաքի տարբեր փողոցներում»[57]: Անհրաժեշտ է պարզել, թե ո՞վ է տվել ոստիկանության զորքերը ներգրավելու անօրինական հրամանը, հարուցված է արդյո՞ք ծառայողական քննություն:

Այլ է իրավիճակն օրվա երկրորդ կեսին, երբ հանրահավաք սկսած ցուցարարները դարձան որոշակի առումով անկառավարելի, ինչը զուգորդվեց անկարգություններով: Մարտի 1-ի երկրորդ կեսին Ֆրանսիական դեսպանատան մոտ տեղի ունեցած իրադարձություններն ընթանում էին երկու հատվածում՝ Մյասնիկյանի արձանի մոտակայքում, որտեղ հավաքված ցուցարարները սպասում էին իրենց առաջնորդին, և Մաշտոց-Պարոնյան-Լեո փողոցներում, որտեղ առանձին բախումներ են տեղի ունեցել ոստիկանների և անձանց խմբերի միջև: Ավելին, մարտի 1-ի գիշերը կասկածելի և հակասական հանգամանքներում են իրականացվել Մաշտոցի պողոտայում գտնվող խանութների թալանը, մեքենաների հրկիզումը: Հատկանշական է, որ Ֆրանսիական դեսպանատան մոտակայքում ընթացող հանրահավաքի մասնակիցները որևէ հարձակում մոտակա խանութների վրա չգործեցին (Euromotors): Նախաքննության ընթացքում անհրաժեշտ է պարզել՝ Ֆրանսիական դեսպանատան մոտակայքում հավաքված խաղաղ ցուցարարների և հարակից փողոցներում անկարգություններ կատարող անձանց միջև առկա է արդյո՞ք իրական կապ: Այս հարցն ունի իրավական կարևոր նշանակություն ցույցի փաստացի ղեկավարների կողմից հարակից փողոցներում կատարված անկարգությունները կազմակերպելու հարցում մեղադրանք առաջադրելիս:

Նախաքննության առարկա պետք է հանդիսանա նաև ոստիկաններին հրազենային վնասվածքներ հասցնելու հարցը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոստիկանությունը դեռևս չի հրապարակել ցուցարարների կողմից ոստիկանների ուղղությամբ կրակ բացելու որևէ ապացույց:

Մաշտոց-Պարոնյան-Լեո փողոցներում տեղի ունեցած բախումների ընթացքում պաշտոնապես զոհվել է 8 հոգի, այդ թվում 7 քաղաքացիական անձ[58]: Ընդ որում՝ 4-ը մահացել են հրազենային վնասվածքներից, իսկ 3-ը՝ հատուկ միջոցների կիրառման արդյունքում (արցունքաբեր գազ):

---

[57] ՀՀ ոստիկանության զորքերի շտաբի պետ, գնդապետ Գեղամ Պետրոսյանի հեռուստատեսային ելույթը; 03/03/2008; http://police.am/page.php?section=news&id=5208&lenguige=am&txt=

[58] Զոհերի թիվը 2008 թ.-ի ապրիլի 15-ի դրությամբ հասավ 10-ի , որից 8-ը՝ քաղաքացիական անձ:

Հավաքների ժամանակ հրազենի գործադրման իրավաչափությունը պարզելիս պետք է վերլուծել հետևյալ թեստերը.

- Հրազենի գործադրումն օրինական է, եթե առկա է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածում նշված որևէ իրավիճակ, մասնավորապես՝ ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու նպատակով, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս: Անհրաժեշտ է պարզել՝ հրազենի գործադրման յուրաքանչյուր դեպքում եղել է արդյո՞ք ցուցարարի կողմից ոստիկանների ուղղությամբ հարձակում, որը իրական սպառնալիք էր ոստիկանների կյանքին կամ առողջությանը, թե՞ ոստիկաններն են նախահարձակ եղել և կիրառել հրազեն:
- Կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակման դեպքում ոստիկանությունը հնարավորություն ունեցել է արդյո՞ք միջամտելու միայն հատուկ միջոցների գործադրմամբ: Եթե պարզվի, որ ոստիկանությունն իրական հնարավորություն ուներ հասնելու իր առջև դրված նպատակին միայն հատուկ միջոցներ գործադրելու միջոցով, սակայն նախընտրել է հրազենի գործադրումը, ապա դա կարելի է գնահատել համաչափության սկզբունքի խախտում: Ուշագրավ է, որ հատուկ միջոցների կիրառման արդյունքում զոհվել են քաղաքացիական 3 անձ: Այս առնչությամբ ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարել է. «Իրադարձությունները ցույց տվեցին, որ այն, ինչ մենք ունենք, բավական հնացած է և միշտ չէ, որ անվտանգ է: 3 զոհով ավելի քիչ կլինեին 7 զոհված քաղաքացիական մարդկանց թիվը, եթե այդ հատուկ միջոցներն, իսկապես, ավելի անվտանգ լինեին»[59]: Հարց է առաջանում՝ որքանո՞վ է իրավաչափ վտանգավոր հատուկ միջոցների կիրառումը, ինչը հանգեցրեց լրացուցիչ 3 զոհի, եթե հատկապես հաշվի առնենք, ինչպես նշեց ՀՀ Նախագահը, որ՝ «մենք դրանք ժառանգել էինք խորհրդային ժամանակներից»: Այստեղից նախաքննության մարմինների համար պետք է ծագի այն հարցը, թե ո՞վ է կարգադրել գործադրել այդ հատուկ միջոցները: Ավելին, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողները պարտավոր են անցնել հատուկ պատրաստություն, ինչպես նաև պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու պիտանիությունը որոշող ստուգումներ: Ո՞ր

[59] ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի մամուլի ասուլիսը, 20/03/2008; http://news.president.am/arm/?sub=press&id=104&year=2008

պաշտոնատար անձն է պատասխանատու նշված ստուգումներն իրականացնելու համար, ե՞րբ են դրանք իրականացվել վերջին անգամ:

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը սահմանում է, որ պետության կողմից ուժի կիրառման արդյունքում առաջացած մահը կարող է համարվել օրինաչափ, եթե այն եղել է «բացառապես անհրաժեշտ» և «ողջամտորեն արդարացված»[60]: Համաչափությունը գնահատելիս այստեղ պետք է հաշվի առնել, որ զոհված ցուցարարների մոտ ջնջված է եղել գլխուղեղը: Ըստ տարածված տեղեկությունների՝ մեկ ժամից ավելի ոստիկանների կողմից կրակ է բացվել ցուցարարների ուղղությամբ: Վերջապես՝ ՀՀ-ում շրջանառվում են տեսահոլովակներ, թե ինչպես են դիմակավորված անձինք կրակ բաց թողնում սեփական ժողովրդի վրա: ՀՀ գլխավոր դատախազությունը պատրաստակամություն է հայտնել ներգրավելու ՄԱԿ-ի փորձագետների՝ տեսահոլովակների իսկությունը ստուգելու նպատակով[61]:
- Հստակ պետք է պարզել՝ մարդկանց զգալի կուտակումների ժամանակ հրազեն գործադրելիս այլ մարդկանց վնաս հասցնելու հնարավորությունը: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը միանշանակ արգելում է մարդկանց զգալի կուտակումների ժամանակ հրազենի գործադրում, եթե դրա գործադրումից կարող են տուժել այլ անձինք: Նկատենք, որ հրազենի գործադրման արգելքի մասին իրավական դրույթում օրենսդիրն օգտագործել է «մարդկանց զգալի կուտակում» հասկացությունը, որն ընդգրկում է հավաքների բոլոր ձևերը: Եթե կոնկրետ իրավիճակում կպարզվի, որ հրազեն օգտագործվել է այնպիսի պայմաններում, երբ առկա է այլ անձանց վնասելու իրական վտանգ, ապա նման միջամտությունը կարող է գնահատվել ոչ իրավաչափ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ ոստիկանության ծառայողը պարտավոր է ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ հրազենի գործադրմամբ անձին պատճառած մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում հնարավոր սեղմ ժամկետում վերադասության կարգով տեղեկացնել ոստիկանության մարմնին: Ոստիկանության մարմինը պարտավոր է դեպքի մասին սեղմ ժամկետում հայտնել տուժողի մերձավոր հարազատներին և դատախազին: Յուրաքանչյուր մահվան դեպքում պետք է իրականացվի հատուկ քննություն: Այս առնչությամբ՝ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար պարոն Թոմմաս Համմերբերգի հետ հանդիպման

[60] Մքքեն և ուրիշներ ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 1995(A n 324)

[61] ՀՀ գլխավոր դատախազություն; Մամուլի հաղորդագրություն; ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն ընդունել է ԵՄ հատուկ ներկայացուցիչ Սեմնեբիին, 21/03/2008, http://www.genproc.am/main/am/16/3817/

ժամանակ նշել է, որ նախաքննական մարմնին գրավոր ցուցում է տվել բազմակողմանի քննություն կատարել ոչ միայն տեղի ունեցած անկարգությունների առնչությամբ՝ բացահայտելու համար դրանց կազմակերպիչներին և կատարողներին, այլ նաև քննության առարկա դարձնել ոստիկանության մարմինների գործողությունների օրինականության հարցը, թեև որևէ գրավոր բողոք չի ստացվել ոստիկանության գործողությունների վերաբերյալ[62]: Մենք հորդորում ենք ՀՀ գլխավոր դատախազությանը ցուցաբերել պրոակտիվ մոտեցում, մասնավորապես՝ չսպասել տուժողների կամ նրանց իրավահաջորդների կողմից բողոքներ ներկայացնելուն:

Այս գլխում առաջադրված բոլոր հարցադրումները պահանջում են սպառիչ պատասխաններ: Մարտի 1-ի իրադարձությունների անաչառ, բազմակողմանի և լրիվ քննությունը միայն կստեղծի իրական նախադրյալներ՝ ստեղծված ճգնաժամային վիճակից դուրս գալու համար: Նման խոշոր ցնցումներից հետո հասարակության մեջ հնարավոր չէ խաղաղության հաստատում, եթե հասարակությունը չի ընդունում, որ իրապես իրականացվել է արդարադատություն:

3.2.3. Արտակարգ դրության ռեժիմ

Մարտի 1-ին արտակարգ դրություն մտցնելու մասին հրամանագիր ստորագրելու առնչությամբ տրված ասուլիսի ժամանակ ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ այն ուղղված է ՀՀ սահմանադրական կարգի պահպանությանը և, առաջին հերթին, ՀՀ բնակչության անվտանգության ապահովմանը: Հրամանագիրը ստորագրվել է այն ժամանակ, երբ ՀՀ Նախագահին զեկուցել են ութ վիրավորների մասին[63]: Ստեղծված պայմաններում արտակարգ իրավիճակի հայտարարումը անհրաժեշտ էր:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ արտակարգ դրություն հայտարարում է ՀՀ Նախագահը: Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով: Հատկանշական է, որ ՀՀ-ում դեռևս ընդունված չէ արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենք, որը կսահմաներ այն բոլոր իրավունքները, որոնք ենթակա են սահմանափակման, սահմանափակումների ծավալները, դրանց նկատմամբ հսկողություն իրականացնելու մեխանիզմները և այլն: Նման իրավիճակում արտակարգ դրություն հայտարարելիս գործնականում ծագեցին հետևյալ հիմնախնդիրները.

1. ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ և ազատություններ կարող են օրենքով սահմանված

---

[62] ՀՀ գլխավոր դատախազություն; Մամուլի հաղորդագրություններ; ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին, 13/03/2008, http://www.genproc.am/main/am/16/3729/

[63] ՀՀ Նախագահի մամլո ասուլիս; Երևանում ստեղծված կացության առնչությամբ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդիպել է լրագրողների հետ, 01/03/2008; http://news.president.am/arm/?sub=press&id=100&from=0&year=2008

կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Թեև ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ կետը մինչև օրենքով արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում ՀՀ Նախագահին թույլ է տալիս իրականացնել իրավիճակից բխող միջոցառումներ, այնուամենայնիվ օրենքի բացակայությամբ իրավունքների սահմանափակումը նորանոր վիճաբանությունների տեղիք տվեց:

2. Հրամանագրի կիրառումը գործնականում ուղեկցվեց մի շարք խախտումներով:

- Թեև արտակարգ իրավիճակի ռեժիմը հայտարարված էր միայն Երևան քաղաքում, սակայն Հրամանագրով սահմանված որոշ սահմանափակումներ ըստ էության գործում էին նաև ՀՀ այլ քաղաքներում (հանրահավաքների ազատությունը):
- ՀՀ Նախագահի վերոնշյալ հրամանագրի 4-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսվել էր իրավապահ մարմինների կողմից անհրաժեշտության դեպքում տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակման և զննության իրականացման հնարավորություն: Պաշտպանի կողմից ստացված դիմում-բողոքները վկայում են այն մասին, որ մեջբերված դրույթին տարածական մեկնաբանություն տալու հետևանքով անհամաչափ սահմանափակվել է, մասնավորապես, Երևան քաղաք մուտք գործելու քաղաքացիների իրավունքը[64]: Չնայած այս հարցը բարձրացվել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մարտի 3-ի հայտարարության մեջ, սակայն դեռևս որևէ արձագանք չի ստացվել իրավապահ մարմինների կողմից. ոչ հերքում, ոչ էլ իրավախախտներին պատասխանատվության ենթարկում:
- Հրամանագրի 4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցների պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում: Մինչդեռ Պաշտպանի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ «A1+», «Լրագիր» լրատվական ինտերնետային կայքերի գործունեությունը դադարեցվել էր:
- Չնայած Հրամանագրով մտցված սահմանափակումները գրաքննություն չէին նախատեսում, ինչը նաև արգելված է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, այդ օրերին փաստացի կիրառվում էր գրաքննություն: Դրա հետևանքով որոշ համերկրային թերթերի տպագրությունն արգելվել էր նյութերի բովանդակության պատճառով: Մի շարք հրատարակություններ, ելնելով

[64] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը երկրում ստեղծված իրավիճակի վերաբերյալ», 5-րդ կետ, 03/03/2008; http://ombuds.am/main/am/9/18/1281/

Հրամանագրով սահմանված ռեժիմից, հրաժարվեցին աշխատելուց, որովհետև հնարավորություններ չունեին ներկայացնելու ընդդիմադիր և քննադատական տեսակետներ, այն դեպքում, երբ ընդդիմությանը վարկաբեկող և վիրավորող, հաճախ ագրեսիվ արտահայտությունների հրապարակումը այլ թերթերում և հեռուստաալիքներով որևէ կերպ չէր սահմանափակվում: Նախագահի հրամանագրի նշված դրույթը չնպաստեց հասարակությանը հանդարտեցնելու նպատակին: Նման անընդունելի լուսաբանման ամենացցուն օրինակը տալիս էր ՀՀ հանրային հեռուստաընկերության առաջին ալիքը (Հ1), որը ոչ միայն անտեսում էր Հրամանագրի դրույթը, այլև խախտում էր «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջները, այն է՝ հանրային հեռուստաընկերություններում հեռարձակվող հաղորդումներում քաղաքական դիրքորոշման գերակշռությունը արգելվում է: Հեռուսատատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ), որն ըստ օրենքի անկախ կարգավորող մարմին է և կոչված է վերահսկելու հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը, չկատարեց իր հիմնական գործառույթներից մեկը և չկանխեց ոչ միայն Հ1-ի, այլև մասնավոր հեռարձակումների մեծ մասի կողմից Հրամանագրով սահմանված դրույթների խախտումները: Քանի որ արտակարգ դրության պայմաններում տեղեկատվական ոլորտում անօրինական դրսևորումներն անմիջականորեն առնչվում էին ընտրություններին, ուստի դրանց համար պատասխանատվության ենթարկելը նույնքան կարևոր է, որքան ընտրական գործընթացում խախտումներ իրականացրած անձանց պատժելը:

3. ԶԼՄ-ների մանիպուլյատիվ օգտագործման պայմաններում խեղաթյուրված էին ներկայացվում նաև միջազգային կառույցների և պաշտոնյաների հայտարարությունները[65], ինչն ապակողմնորոշում էր հասարակությանը և Հայաստանի միջազգային հեղինակության վրա բացասաբար ազդող լրացուցիչ գործոն էր դառնում:

4. Արտակարգ իրավիճակի ընթացքում հանրահավաքների ազատության առնչությամբ կատարված օրենսդրական փոփոխություններն ուղղված էին «երկարացնելու» Հրամանագրով սահմանված ռեժիմը: Այդ նպատակով՝ օրենքի տվյալ փոփոխություններն ուժի մեջ մտան պաշտոնական հրապարակման հենց հաջորդ օրը, ինչը համընկավ արտակարգ իրավիճակի ավարտի հետ: Արտակարգ իրավիճակի ավարտից հետո անմիջապես նշված սահմանափակումների կիրառումը ուղղակիորեն հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ

[65] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ; Ընտրությունների դիտորդական առաքելություն. ՀՀ նախագահական ընտրություններ 2008; Հետընտրական զարգացումների միջանկյալ զեկույց, փետրվարի 20 - մարտի 3, 2008, էջ 6: http://www.osce.org/documents/odihr/2008/03/30090_hy.pdf

մասին, համաձայն որի՝ իրավունքներն ու ազատությունները սահմանափակող օրենքն ուժի մեջ կարող է մտնել դրա պաշտոնական հրապարակումից առնվազն տասը օր անց:

Ակնհայտ է, որ մարտի 1-ի երեկոյան արտակարգ իրավիճակ մտցնելու որոշումը և դրա հետ կապված հետագա գործողությունները չէին նպաստում հասարակության մեջ առաջ եկած բևեռացման հաղթահարմանը: Փորձ կատարելով որևէ այլընտրանքային տեղեկություններ հայթայթել՝ քաղաքացիների ստվար զանգվածները ամեն օր դրդված էին ուսումնասիրելու ամբողջ ռադիո- և ինտերնետային տարածքը, որտեղից և տեղեկանում էին դժգոհություն ապրելու առիթ տվող նորանոր փաստերի: Նման աղբյուրներից հայթայթված ինֆորմացիան հզոր ազդեցություն ուներ սպառողների վրա, որքան էլ այն ուռճացված կամ ոչ համարժեք էր, քանի որ չէր հակակշռվում այլ օբյեկտիվ տեղեկատվությամբ:

Արտակարգ իրավիճակի պայմաններում իրականացված միջոցառումները չնպաստեցին հասարակության մեջ տիրող կրքերի սառեցմանը:

ԲԱԺԻՆ 4

Սույն բաժնում ներկայացվում են հետընտրական զարգացումների ընթացքում իրավունքների խախտումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված դիմում-բողոքների կապակցությամբ Պաշտպանի ուսումնասիրությունները, ինչպես նաև Պաշտպանի նախաձեռնությամբ հետընտրական զարգացումների առնչությամբ քրեակատարողական հիմնարկներ և մարզեր կատարած այցելությունների արդյունքները:

4.1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մարտի 1-ի դեպքերից հետո ստացվել են վաթսունից ավելի գրավոր և բանավոր դիմում-բողոքներ և հաղորդումներ: Պաշտպանին են հասցեագրվել նաև կոլեկտիվ հայտարարություններ՝ 1000-ից ավելի քաղաքացիների անունից:

Ստացված դիմում-բողոքների բովանդակությունը, ինչպես նաև վերջինով պայմանավորված Պաշտպանի՝ դրանց արձագանքելու օրենսդրական հնարավորությունները նկատի ունենալով, բոլոր բողոքները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

Ա) անձի՝ որպես մեղադրյալ ներգրավված լինելու դեպքում՝ մեղադրանքի անհիմն, քաղաքականացված լինելուն և նման այլ հանգամանքների,

Բ) ոստիկանությունում ապօրինի պահմանը, ձերբակալման կարգի և ժամկետների խախտմանը,

Գ) քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով բերման ենթարկված անձանց պաշտպան չտրամադրելուն,

Դ) Հյուսիսային պողոտայում կազմակերպվող միջոցառումներին մասնակցող անձանց ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումներին վերաբերող դիմում-բողոքներ:

Ա) Մարտի 1-ի դեպքերից հետո կալանավորված անձանց գերակշռող մասն անհամաձայնություն են արտահայտել իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքների վերաբերյալ՝ գտնելով, որ դրանք անհիմն են և կրում են բացառապես քաղաքական բնույթ: Սակայն համապատասխան հաղորդումներին արձագանքելու Պաշտպանի օրենսդրական հնարավորությունները սահմանափակ են: Մեղադրանքների հիմքում ընկած փաստերի հիմնավորվածության գնահատումը դատական ատյանների իրավասությունն է, որոնց գործունեությանը Պաշտպանը միջամտելու լիազորություններ չունի: Պաշտպանի իրավասությանն են վերաբերում անձանց բացառապես քրեադատավարական

իրավունքների խախտման դեպքերի ուսումնասիրությունը, կանխարգելումը և վերականգնումը:

Բ) Դիմում-բողոքների հաջորդ խումբը վերաբերել է ոստիկանությունում ապօրինի պահմանը, Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ձերբակալման կարգի, ժամկետների խախտումներին:

Օրինակ 1. Քաղաքացին Պաշտպանին ուղղած գրավոր դիմումով հայտնել է, որ մարտի 1-ին, ժամը 10-ին Հյուսիսային պողոտայի տարածքից Ոստիկանության աշխատակիցները եղբորը տարել են Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնի բաժին: Այնուհետև, նույն օրը տեղափոխել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ոստիկանության բաժին, որտեղ նրան ապօրինաբար պահել են մինչև մարտի 5-ը, այսինքն ավելի, քան նախատեսված է օրենսդրական ակտերով:

Օրինակ 2. Կալանավորված անձը հայտնել է, որ մարտի 3-ին ձերբակալվել է, սակայն ձերբակալման որոշումը կայացվել է մարտի 5-ին: Մարտի 3-ին տարել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժին, ապա տեղափոխել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ձերբակալված անձանց պահման վայր և 4 օր պահել այնտեղ:

Գ) Դիմում-բողոքների հաջորդ խումբը վերաբերել է քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով բերման ենթարկված անձանց պաշտպան չտրամադրելուն:

Հարկ ենք համարում նշել, որ պաշտպան ունենալու իրավունքն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածում, այնպես էլ՝ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի c ենթակետում: ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:

Պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրության 20-րդ հոդվածում օգտագործված ձերբակալում, խափանման միջոցի ընտրություն և մեղադրանքի առաջադրում հասկացությունները պետք է մեկնաբանել ոչ թե քրեադատավարական, այլ սահմանադրաիրավական իմաստով: Պաշտպան ունենալու սահմանադրական իրավունքի իրականացման նպատակներից ելնելով՝ հարկավոր է հաշվի առնել ոչ միայն և ոչ այնքան քրեական հետապնդման ենթարկվող անձի ձևական-դատավարական, այլ՝ փաստացի կարգավիճակը: Հետևաբար՝ բերման ենթարկվածների՝ փաստաբան ներգրավելու պահանջն օրինական է և ենթակա անհապաղ բավարարման, նույնիսկ մինչև

ձերբակալման արձանագրության կազմումը: Այս հետևությունը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով[66]:

Դ) Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների վերջին խումբը վերաբերել է Հյուսիսային պողոտայում «զբոսնելու» ընթացքում ՀՀ ոստիկանության տարբեր բաժիններ քաղաքացիներին բերման ենթարկելուն:

Իրավապահ մարմինների աշխատակիցների գործողությունների օրինականությունը գնահատելու համար անհրաժեշտ է, որպեսզի նրանց կողմից հստակ տրվեն հետևյալ հարցերի պատասխանները.

ա. ի՞նչ իրավախախտում են կատարել բերման ենթարկված քաղաքացիները, արդյո՞ք քաղաքացիների այսպես կոչված «քաղաքական զբոսանքները» կարող են դիտվել որպես վարչական իրավախախտում,

բ. եթե քաղաքացիները կատարել են իրավախախտում, ապա օրենքով նախատեսված ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել և ինչպիսի՞ դատավարական փաստաթղթեր են կազմվել բերման ենթարկելու և իրավախախտման փաստի վերաբերյալ,

գ. եթե քաղաքացիները իրավախախտում են թույլ տվել, ապա ի՞նչ չափորոշիչներով են առաջնորդվել ոստիկանության աշխատակիցները նրանց մի մասին բերման ենթարկելիս, իսկ մյուս մասին՝ ոչ, արդյո՞ք նրանց գործողություններով չի խախտվել իրավահավասարության սահմանադրական սկզբունքը,

դ. եթե քաղաքացիներին բերել են ոստիկանության բաժիններ անձը պարզելու համար, արդյո՞ք տեղում ստուգվել է նրանց ինքնությունը՝ դա հավաստող փաստաթղթերի միջոցով:

4.2. Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը[67], Պաշտպանի հանձնարարականով ստեղծված աշխատանքային խմբերը իրականացրել են այցելություններ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Երևան-կենտրոն», «Վանաձոր», «Արթիկ», «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներ և հանդիպել ու առանձնազրույցներ են ունեցել 2008 թ. մարտի 1-ի իրադարձություններին հաջորդող շրջանում կալանավորված անձանց հետ: Այցելությունների ընթացքում աշխատանքային խմբերը հանդիպել են ընդհանուր առմամբ մոտ 110 կալանավորված անձանց հետ: Այցելությունների ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք ներկայացված են ստորև:

---

[66] Murray, 1996-1, para 66, 08.02.1996թ, Foti, Series A, no. 56, para 52, 10.12.1982 թ.:
[67] ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված

Անդրադառնալով հետընտրական զարգացումներին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ ՀՀ Նախագահի հրամանագիրը իրավացիորեն չի նախատեսել դատավարական որևէ իրավունքի սահմանափակում, և անձինք կարող են ձերբակալվել կամ կալանավորվել միայն օրենքով սահմանված կարգով:

4.2.1. Բողոքներ դաժան և անմարդկային վերաբերմունքի մասին

Կալանավորվածներից 20-ը հայտնել են, որ ոստիկանության աշխատակիցների կողմից բերման ենթարկվելու, ինչպես նաև ոստիկանության բաժիններում գտնվելու ժամանակահատվածում ենթարկվել են ծեծի և բռնությունների:

Օրինակ 1. Կալանավորված անձը հայտնել է, որ իրեն ձերբակալել են մարտի 1-ին Ազատության հրապարակում: Ձերբակալման ընթացքում իր նկատմամբ կիրառվել է ուժ, այն դեպքում, երբ նա որևէ դիմադրություն չի ցուցաբերել: Այնուհետև վերոհիշյալ անձին տեղափոխել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն, ապա՝ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին, որտեղ գնդապետի կոչումով ինչ-որ մեկը հարվածել է իր գլխին, ինչպես նաև՝ ծեծի ենթարկել իրեն:

Օրինակ 2. Կալանավորված անձը հայտնել է, որ ձերբակալվել է 07.03.2008 թ. Արտաշատում: Արտաշատի ոստիկանության բաժնում ենթարկվել է ծեծի: 12.03.2008 թ. նրան տեղափոխել են «Նուբարաշեն» ՔԿՀ: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմից բողոքներ չունի:

4.2.2. Փաստաբան ներգրավելու հետ կապված խնդիրներ

Հարցումները ցույց են տվել, որ 110 կալանավորված անձանցից 60-ը օգտվել են փաստաբան ունենալու իրենց դատավարական իրավունքից, իսկ 50 հոգին տարբեր դրդապատճառներով հրաժարվել են պաշտպան ունենալուց: Մասնավորապես, 50 անձանցից 31-ը գտել են, որ իրենք ինքնուրույն կարող են իրականացնել իրենց պաշտպանությունը, 19-ը նշել են, որ սոցիալական պայմաններից ելնելով հնարավորություն չունեն փաստաբանին վարձատրելու: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները նման անձանց բացատրել են հանրային պաշտպանի ինստիտուտի առանձնահատկությունները: Կալանավորվածներից մի քանիսը հայտնել են, որ թեև ունեն պաշտպան, այնուամենայնիվ համարում են, որ պաշտպանին ներգրավելը կրել է ձևական բնույթ, քանի որ թույլ չեն տալիս հանդիպել իրենց պաշտպանյալների հետ կամ ապահովում են փաստաբանի ներկայությունը պատշաճ կարգի խախտումներով:

Օրինակ 1. Կալանավորված անձը, որը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով, հայտնել է, որ հանրային պաշտպանի գրասենյակից իրեն տրամադրել են պաշտպան, սակայն վարույթն իրականացնող մարմինը խոչընդոտում է փաստաբանին հանդիպելու իր պաշտպանյալի հետ: Նա նաև նշել է, որ մարտի 25-ի դրությամբ իր հետ կապված ոչ մի քննչական գործողություն դեռևս չի իրականացվել:

Օրինակ 2. Կալանավորված անձը հայտնել է, որ ինքն ամբողջովին մեկուսացված է, իրեն թույլ չեն տալիս օգտվել մամուլից և հեռախոսակապից: Մյուս դժգոհությունն այն է, որ դիմում է փաստաբանին հանդիպելու համար, սակայն իր դիմումին ընթացք են տալիս օրեր անց, այսինքն փաստաբանի ներկայությունը պատշաճ կարգով չի ապահովվում:

4.2.3. Հացադուլ հայտարարած անձինք

2008 թ. մարտի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցները հանդիպել են հացադուլ հայտարարած 25 անձանց հետ, վերջիններս ցանկացել են նման ձևով իրենց բողոքը արտահայտել՝ անհիմն մեղադրանքների, իրենց քաղաքական բանտարկյալ համարելու, քրեակատարողական հիմնարկի պահման պայմանների վերաբերյալ:

Օրինակ 1. Սույն թվականի մարտի 17-ին «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքային խումբը հանդիպել է հացադուլ հայտարարած Վարդգես Գասպարիին: Կալանավորվածը հայտնել է, որ իրեն մարտի 1-ին ժամը 8:00-ին Օպերայի շրջակայքում ձերբակալել և տեղափոխել են Կենտրոն համայնքի ոստիկանության բաժանմունք, այնուհետև տարել են Արաբկիր համայնքի ոստիկանության բաժանմունք, հետո տեղափոխել Ձերբակալված անձանց պահման վայր (ՁԱՊՎ), իսկ մարտի 6-ի կեսգիշերին տեղափոխվել է «Նուբարաշեն» ՔԿՀ: Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով: Նա հայտնել է նաև, որ ոչ մի ապօրինություն չի գործել և դիմադրություն ցույց չի տվել: Ոստիկանությունում եղած ժամանակ նրան թույլ չեն տվել կապվել հարազատների հետ և տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին: Իր նկատմամբ առաջադրված մեղադրանքը չի ընդունում: Նշել է, որ հանդիպել է նաև միջազգային դիտորդների հետ: Մարտի 3-ին, գտնվելով ՁԱՊՎ-ում հացադուլ է հայտարարել: Ըստ կալանավորված անձի հայտարարության՝ իր հացադուլը կապված է զանգվածային բնույթ կրող՝ մարդկանց իրավունքների բազմաթիվ խախտումների և քրեակատարողական հիմնարկում տիրող իրավիճակի հետ: Մասնավորապես, նա նշել է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գտնվելու ժամանակ խախտվել են իր հետևյալ իրավունքները՝ պահել են միևնույն խցում՝ նախկինում մի քանի անգամ դատապարտված անձի հետ, որը ևս հացադուլ է հայտարարել և ըստ Վ. Գասպարիի՝ տառապում է թոքախտ հիվանդությամբ: Կալանավորը խնդրել է, որ իր խցակցին

ենթարկեն բժշկական ստուգման[68]: Նա հայտնել է նաև, որ թիվ 04, 09, 29, 79 խցերի պատերին փակցված չեն դատապարտյալների իրավունքները և ազատությունները վկայակոչող հուշաթղթեր, որը շատ կարևոր է օրենքը պահպանել ցանկացող կալանավորված անձանց համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցները արձանագրեցին, որ հացադուլավորի խուցը գտնվում է անմխիթար վիճակում: Վ. Գասպարին դժգոհել է հակասանիտարական պայմաններից, պատմելով, որ վերջերս կոյուղու ջուրը լցվել էր իրենց խցի մեջ, ծածկել սենյակի հատակը, և միայն մեկ ժամ անց նրան թույլ են տվել մաքրել այն: Կալանավորված անձը բողոքեց նաև, որ սոցիալ-հոգեբանական աշխատանքներ չեն կատարվում:

Օրինակ 2. 2008 թ. մարտի 25-ին Պաշտպանի հանձնարարությամբ աշխատանքային խումբը կրկին այցելել է «Նուբարաշեն» ՔԿՀ և հանդիպել մարտի 24-ին հացադուլ հայտարարած Սուրեն Սուրենյանցին: Վերջինս հայտնել է, որ 25.02.2008 թ. ժամը 20:30-ի սահմաններում քաղաքացիական հագուստով 3 հոգի, առանց ներկայանալու, իրեն տարել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնի բաժին: Այնուհետև՝ նրան տարել են հետաքննիչի, ապա՝ քննիչի մոտ քննչական գործողություններ իրականացնելու նպատակով: Ըստ Սուրենյանցի՝ նրա նկատմամբ խափանման միջոց, իր համար անհասկանալի ձևով, ընտրվել է կալանք 20-օրյա ժամկետով: Հայտնել է նաև, որ իր նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225[1] հոդվածով, քանի որ նշված հոդվածը ազատազրկման ձևով պատիժ չի նախատեսում և չէր կարող կալանքն ընտրվել որպես խափանման միջոց, հետագայում առաջադրել են ևս մի քանի մեղադրանքներ 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 300-րդ հոդվածով, որոնց հետ կապված խափանման միջոցը երկարացվել է 2 ամիս ժամկետով: Նշել է, որ հացադուլ է հայտարարել և կդադարեցնի այն իր պահանջների կատարման դեպքում: Ներկայացրել է հետևյալ պահանջները. 1) փոխել իր նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը, 2) սկսել իրավական-քաղաքական երկխոսություն: Ս. Սուրենյանցի նկատմամբ ՔԿՀ–ում սահմանված է եղել բժշկական վերահսկողություն:

---

[68] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցները 17.03.2008 թ. հանդիպել են ՔԿՀ-ի բժիշկներին: Վերջիններս հայտնել են, որ կատարվել են խորխի մանրադիտակային և թոքերի ռենտգեն հետազոտություններ: 28.02.2008 թ. խորխը տուբերկուլյոզի հարուցիչ չի պարունակել, 04.03.2008 թ. թոքերի ռենտգեն հետազոտությամբ պաթոլոգիական պրոցես չի հայտնաբերվել:

4.2.4. Անհիմն քրեական հետապնդումներ

Հարկ ենք համարում նշել նաև, որ կան դեպքեր, երբ կալանավորված անձինք հայտնում են, որ իրենք տեղյակ չեն, թե իրենց ինչի համար են կալանավորել և հայտնել են, որ զանգվածային անկարգություններին չեն մասնակցել, հրապարակային ելույթներ չեն ունեցել:

Օրինակ 1. Քաղաքացին (գրանցված է Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանում, ներկայումս բնակվում է Երևան քաղաքում) հայտնել է, որ իրեն բերման են ենթարկել մարտի 2-ի լույս 3-ի գիշերը, երբ նա պարզապես քայլում էր փողոցում: Նրան տարել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին, այնուհետև Վաղարշապատի ոստիկանության բաժին: Ըստ նրա, միայն մարտի 10-ին են իրեն տեղափոխել «Նուբարաշեն» ՔԿՀ: Վերջինս հայտնել է նաև, որ չի մասնակցել հանրահավաքների, տեղյակ չէ՝ ինչ պատճառով է ձերբակալվել, միաժամանակ բողոքել է, որ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել է դաժան ծեծի:

Օրինակ 2. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվող կալանավորված խուլ-համր անձի հետ հնարավոր եղավ շփվել խցակցի միջոցով, ինչպես նաև գրելով փորձեցինք ծանոթանալ վերջինիս խնդիրներին: Հայտնեց, որ մարտի 3-ին ժամը 12:30-ին ինքը կանգնած է եղել Կրկեսի մոտ աշխատանք փնտրողների կայանատեղում, երբ ոստիկանները եկել են այդ կողմ: Բոլորը փախել են, իսկ ինքը կանգնած է մնացել և իրեն ձերբակալել ու տարել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին, որտեղից մարտի 6-ին տեղափոխել են «Նուբարաշեն» ՔԿՀ: Նշել է, որ ինքը ոչ մի ապօրինի գործողություն չի կատարել, ոչինչ չի ջարդել և չի հասկանում, թե իրեն ինչու են ձերբակալել: Հայտնել է նաև, որ քննության ժամանակ իրեն իր նշանները հասկացող կամ իր հետ բացատրվելու ունակ թարգմանիչ չեն տրամադրել:

Օրինակ 3. Քաղաքացին հայտնել է, որ մարտի 6-ին Մարտունու ԱԱԾ աշխատակիցները կալանավորել են իրեն և մեղադրանք առաջադրել 225-րդ հոդվածով, մարտի 1-ին զանգվածային անկարգություններ կատարելու համար: Սակայն կալանավորվածը հայտնեց, որ մարտի 1-ի առավոտյան ինքը բերման է ենթարկվել Մարտունու ոստիկանություն բաժին, որտեղ գտնվել է մինչև երեկո, և ինքը չէր կարող, գտնվելով Մարտունիում, Երևան քաղաքում կատարել զանգվածային անկարգություններ: Մարտունու ոստիկանությունում գտնվելու փաստը հաստատվել է նաև գյուղապետի և ոստիկանության տված տեղեկանքներով:

4.2.5. Կալանավորվածների բողոքներն իրենց նկատմամբ իրականացվող քաղաքական հետապնդման մասին:

Քրեակատարողական հիմնարկներ այցելությունների ընթացքում 70 կալանավորված անձ նշել է, որ իրենց մեկուսացրել են իրենց քաղաքական հայացքների համար և իրենք իրենց համարում են քաղաքական բանտարկյալներ:

Օրինակ 1. Քաղաքացին հայտնել է, որ 03.03.2008 թ.-ին իր բնակարանում խուզարկություն կատարելու ժամանակ ոչինչ չի հայտնաբերվել, միայն ԱԱԾ է բերվել իր համակարգիչը: 14.03.2008 թ. իրեն բերման են ենթարկել ԱԱԾ և մինչ այդ պահը նա որևէ դատավարական կարգավիճակ չի ունեցել: Այնուհետև իրեն մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածով և 300-րդ հոդվածի 1-ին մասով: Նշել է նաև, որ Ազատության հրապարակի հարթակից ելույթ է ունեցել 27.02.2008 թ.: Իրեն համարում է քաղբանտարկյալ և գտնում է, որ հետապնդվում է իր քաղաքական հայացքների համար: Ունի փաստաբան, ծեծի չի ենթարկվել, սակայն նշել է, որ եղել է հոգեբանական ճնշում: Պահման վայրի վարչակազմից դժգոհություն չունի:

Օրինակ 2. Քաղաքացին հայտնել է, որ ինքն ամբողջովին մեկուսացված է, նրան թույլ չեն տալիս օգտվել մամուլից: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով: Ունի փաստաբան, գտնում է, որ առաջադրված մեղադրանքն անհիմն է և իրականությանը չի համապատասխանում: Այն նպատակ է հետապնդում իրեն մեկուսացնել և ինքը ներկայումս ենթարկվում է քաղաքական հետապնդումների:

4.3. Այցելություն մարզեր

4.3.1. Սույն թվականի մարտի 19-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խումբը այցելել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժին, ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» ՔԿՀ, ինչպես նաև հանդիպել «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա» հասարակական կազմակերպության ներկայացուցչի հետ:

ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի պետի հետ հանդիպման ընթացքում վերջինս հայտնել է, որ մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների հետ կապված ձերբակալվել են նաև Վանաձոր քաղաքի բնակիչներ, որոնց նկատմամբ դատարանի կողմից որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը: Նրանցից մեկը գտնվում է «Վարդաշեն» ՔԿՀ-ում, իսկ մյուսները՝ ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» ՔԿՀ-ում:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետը ներկայացրեց մարզում տիրող իրավիճակը, ինչպես նաև տրամադրեց մարտի 14-ի դրությամբ մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ բերման ենթարկվածների ցուցակը:

ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» ՔԿՀ-ում աշխատանքային խումբը հանդիպել է ոստիկանության ցուցակում տեղ գտած կալանավորված անձանց հետ:

Օրինակ 1. Կալանավորվածը հայտնել է, որ փետրվարի 29-ին Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի շտաբի պետի առաջարկով ինքը և ևս երեք հոգի Վանաձորից մեկնել են Երևան՝ հանրահավաքին մասնակցելու համար: Մարտի 1-ի վաղ առավոտյան, երբ Ազատության հրապարակում ինքը վրանում քնած է եղել, նույն հրապարակում գտնվող այլ անձինք արթնացրել են իրեն՝ ասելով, որ դուրս գա վրանից, քանի որ ոստիկանները մտել են հրապարակ: Ինքը դուրս չի եկել վրանից, սակայն մի քանի րոպեից վրանի մեջ ոստիկանները հարվածել են իրեն, որից հետո դուրս է եկել, ապա՝ նաև հեռացել Ազատության հրապարակից: Այնուհետև՝ գնացել միացել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության մոտ հավաքված ցուցարարներին: Ոստիկանության բաժին բերման ենթարկվելու ժամանակ իրեն տեղեկացրել են, որ ինքը ոտքով հարվածել է ոստիկանության ավտոմեքենայի պետհամարանիշին, ինչը, սակայն, ինքը չի հիշում, քանի որ հոգեկան հիվանդություն ունի, իսկ մարտի 1-ի վաղ առավոտյան իր հետ կատարված դեպքերը ավելի են սրել իր հոգեկան վիճակը: Նշել է նաև, որ բանակից ազատվել է հոգեկան հիվանդության պատճառով:

Մարտի 1-ի գիշերն օթևանել է Մալաթիա շուկայի հարևանությամբ գտնվող ինչ-որ հյուրանոցում, իսկ մարտի 2-ին վերադարձել է Վանաձոր: Վանաձորի ոստիկանություն իրեն բերման են ենթարկել մարտի 3-ին, որտեղ պահել են ձերբակալվածների պահման վայրում (ՁՊՎ) մինչև մարտի 13-ը, ապա տեղափոխել են ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» ՔԿՀ, ինչը հաստատվեց նաև մեղադրյալի շարժի քարտի տվյալներով: Ձերբակալվածին ՁՊՎ-ում 10 օր պահելը Վանաձորի ոստիկանության բաժնի պետը հիմնավորեց Լոռու մարզի դատախազի կողմից իրեն ուղղված 06.03.2008 թ. թիվ 1/37-08 գրությամբ (մուտք է եղել 06.03.2008 թ., մուտքի թիվ՝ 1648), որով խնդրել է, որպեսզի մեղադրյալ Ստեփան Սարգսյանի հետ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու նպատակով նրան մինչև 2008 թ. մարտի 13-ը պահեն Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի ՁՊՎ-ում:

Կալանավորվածը նշել է նաև, որ ոստիկանության Վանաձորի բաժնում և «Վանաձոր» ՔԿՀ-ում որևէ բռնություն իր նկատմամբ չի կիրառվել:

Օրինակ 2. Կալանավորված անձը հայտնել է, որ փետրվարի 28-ին գնացել է Երևան, մասնակցել Ազատության հրապարակում տեղի ունեցող հանրահավաքներին, գիշերել է ընկերոջ տանը: Փետրվարի 29-ին հանրահավաքի մասնակցել է մինչև ժամը 16:00:

Մարտի 1-ի առավոտյան գնացել է Ազատության հրապարակ, տեսել, որ ցուցարարներ չկան, ապա գնացել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության մոտ:

06.03.2008 թ. բերման է ենթարկվել ոստիկանության աշխատակիցների կողմից, որից հետո տարել են դատախազություն, հարցաքննել, ապա բաց թողել: 08.03.2008 թ. կրկին տարել են ոստիկանություն և տեղեկացրել, որ իր դեմ ցուցմունք տվող կա:

Հայտնել է, որ մարտի 11-ից գտնվում է «Վանաձոր» ՔԿՀ-ում: Իր պաշտպանի հետ հանդիպել է մեկ անգամ՝ ոստիկանության բաժնում: Ոստիկանության Վանաձորի բաժնում և «Վանաձոր» ՔԿՀ-ում իր նկատմամբ որևէ բռնություն չի կիրառվել:

Օրինակ 3. Կալանավորված անձը (դատապարտված չի եղել, չի աշխատում, ՀՀԾ կուսակցության անդամ, 10 տարի եղել է Մոսկվայում) հայտնել է, որ իրեն մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հանրահավաքներին մասնակցել է փետրվարի 22-ից: Գիշերել է Ազատության հրապարակում՝ սեփական ավտոմեքենայի մեջ: Մարտի 1-ի վաղ առավոտյան միայնակ քնած է եղել «Հանրապետություն» կուսակցության գրասենյակի մոտ գտնվող իր ավտոմեքենայում: Երբ արթնացել է, տեսել է, որ ցուցարարները Ազատության հրապարակում չեն և այն շրջափակված է ոստիկաններով: Որոշ ժամանակ մնացել է մեքենայում, ապա ժամը 12:00-13:00-ի սահմաններում մեքենան թողել է նույն տեղում և ոտքով գնացել ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության մոտ, որտեղ մնացել է մինչև ժամը 16:00, ապա գնացել Արմավիրի մարզ:

Իր բարեկամից տեղեկանալով, որ Վանաձորում ոստիկանությունը իրեն է փնտրում՝ մարտի 10-ին ներկայացել է Ոստիկանության Վանաձորի բաժին, որտեղ պահել են 3 օր, ապա տարել «Վանաձոր» ՔԿՀ:

Ցուցմունք չի տվել, որի համար ստորագրել է, հրաժարվել է պաշտպանից:

4.3.2. Այցելություն Շիրակի մարզ

18.03.2008 թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները այցելել են նաև ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրիի բաժին: Հանդիպել են բաժնի պետի հետ, որը հայտնել է, որ մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած անկարգություններին մասնակցելու կասկածանքով Գյումրիի

բաժին բերման են ենթարկվել 3 անձ, որոնցից երկուսին հարցաքննել և ազատ են արձակել, իսկ մեկին ձերբակալել և տեղափոխել են Երևան քաղաք:

Այցելություններ են կատարվել նաև ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» և «Կոշ» ՔԿՀ-ներ: Հիմնարկների ղեկավարները տեղեկացրել են, որ մարտի 1-ի դեպքերի կապակցությամբ հիմնարկներում կալանավորված անձինք չկան:

Ընդհանուր առմամբ, քրեակատարողական հիմնարկներում կալանավորների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում նրանց գերակշռող մասը անհամաձայնություն են արտահայտել իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքների վերաբերյալ: Վերջիններիս պնդմամբ՝ առաջադրված մեղադրանքներն անհիմն են և կրում են բացառապես քաղաքական բնույթ: Պաշտպանի ներկայացուցիչները պարզաբանել են, որ մեղադրանքների հիմքում ընկած փաստերի հիմնավորվածության գնահատումը դատական ատյանների իրավասությունն է, որոնց գործունեությանը Պաշտպանը միջամտելու լիազորություններ չունի: Հանդիպումների ընթացքում պարզաբանվել է նաև, որ այս փուլում Պաշտպանի իրավասությանն են վերաբերում տվյալ անձանց քրեադատավարական իրավունքների խախտման դեպքերի ուսումնասիրությունը, կանխարգելումը և վերականգնումը:

Հարկ ենք համարում նշել, որ գրավոր ներկայացված դիմում-բողոքների վերաբերյալ գրություններ են ուղարկվել համապատասխան պաշտոնատար անձանց, իսկ այցելությունների ժամանակ վեր հանված խնդիրները Պաշտպանը ավելի մանրամասն կներկայացնի իր 2008 թ. տարեկան զեկույցում:

Ամփոփելով հետընտրական շրջանում գրավոր ներկայացված դիմում-բողոքները, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունները՝ պետք է նշել, որ շատ դեպքերում եղել են քրեադատավարական ժամկետների խախտումներ, պաշտպան ունենալու իրավունքի խախտումներ, մասսայական ձերբակալություններ, որոնք ձերբակալվածների կարծիքով անհիմն են և կրում են քաղաքական բնույթ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, որը չունի գերատեսչական որևէ ենթակայություն, նախաքննությունը պետք է իրականացնի բազմակողմանի և հիմնավորված, որպեսզի կասկած չմնա, որ Հայաստանի Հանրապետությունում կան քաղաքական բանտարկյալներ և քաղաքական հետապնդումներ: Այս առումով չափազանց կարևոր է, որպեսզի հետընտրական զարգացումների առնչությամբ պատասխանատվության ենթարկվեն բացառապես իրավախախտումներ կատարած անձինք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կարող են երաշխավորված լինել միայն կայացած ժողովրդավարության պայմաններում: Միայն այդ պայմաններում է հնարավոր խուսափել հասարակության և պետության պառակտումից և ձևավորել պետական իշխանության ինստիտուտների նկատմամբ հասարակության վերահսկողության և վստահության մթնոլորտ:

Անցումային երկրների մեծամասնությունում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում, ներքաղաքական կայունությունը հիմնականում ապահովվում է ոչ թե իշխանությունների երեք թևերի միջև զսպումների և հակակշիռների համակարգի միջոցով, այլ իշխանության որևէ մեկ ինստիտուտի, օրինակ՝ Նախագահի, գերակշռության միջոցով:

Պետական իշխանության համակարգում քաղաքական մեծամասնությունը կարող է իրականացնել ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված արդյունավետ կառավարում միայն այն դեպքում, եթե երաշխավորված են քաղաքական փոքրամասնության իրավունքները, եթե մեծամասնությունը հաշվի է առնում փոքրամասնության ծրագրերն ու մոտեցումները: Այս առումով ժողովրդավարությունը դրսևորվում է որպես քննարկումների, տարբեր քաղաքական ուժերի միջև բանակցությունների, այլընտրանքային մոտեցումների և կարծիքների համադրման և դրանցից ամենալավն ընտրելու միջոցով կառավարում: Այն իշխանությունը, որը հաշվի չի առնում փոքրամասնության կարծիքը, բացառում է փոքրամասնության հետ քննարկումների արդյունքում իր մոտեցումների փոփոխության հնարավորությունը, սպառնում է նաև անհատի ազատություններին: Այդ տեսակետից դժվար է գերագնահատել կուսակցությունների դերը հասարակության քաղաքական համակարգում:

Կուսակցական համակարգը պասիվ մեխանիզմ չէ հասարակության և պետության միջև, այլ ակտիվ գործոն, որն ազդում է թե՛ մեկի, թե՛ մյուսի վրա: Հասարակության և պետության փոխազդեցությունն իր արտացոլումն է գտնում կուսակցական համակարգում և մոդելավորվում ընդդիմադիր և իշխող կուսակցությունների փոխհարաբերությունների տեսքով: Հասարակական դժգոհությունը պետության նկատմամբ նվազում է իշխող կուսակցության քաղաքականության փոփոխությամբ, կուսակցական բլոկների վերախմբմամբ, նոր ընտրությունների միջոցով, իշխող կուսակցությունների փոփոխությամբ: Կուսակցական համակարգի ինստիտուցիոն դինամիզմը, որը դրսևորվում է կուսակցությունների կողմից կառավարության և ընդդիմության դերերի փոփոխմամբ, անհրաժեշտ պայման է հասարակության և պետության սոցիալ-քաղաքական կայունության համար: Բայց, դժբախտաբար, վերը նշված դասական իրավիճակը լրիվ

դեֆորմացված էր Հայաստանի Հանրապետությունում, որտեղ մինչև վերջին նախագահական ընտրություններն իշխող էլիտայի հիմնական նպատակը ոչ այնքան բազմակուսակցական համակարգի ստեղծումն էր, որը կստանձներ պետության և հասարակության միջև միջնորդի դերը, որքան արհեստական մեխանիզմների կազմավորումը:

Ժողովրդավարության պայմաններում խորհրդարանում մեծամասնություն է ստանում այն կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը, որն ունի առավել մեծ ընտրազանգված: Այլ է վիճակը ոչ ժողովրդավարական երկրներում, որտեղ խորհրդարանում մեծամասնություն ունեցող ուժերը հնարավորություն են ստանում վերարտադրվելու նույնիսկ այն պայմաններում, երբ նրանք չունեն ընտրազանգվածի մեծամասնության աջակցությունը: (Տե՛ս Սխեմա 1 և 2):

Սխեմա 1. Դասական մոդել



Սխեմա 2. Դեֆորմացված մոդել



Ինչպես տեսնում ենք, մեծամասնության և փոքրամասնության իրավիճակը հասարակությունում արտացոլվում է կուսակցական համակարգում և ընտրությունների միջոցով արտահայտվում է ներկայացուցչական մարմնում՝ խորհրդարանում: Խորհրդարանի ներկայացուցչական էությունն էլ կազմում է պառլամենտարիզմի հիմքը:

Ընտրությունների միջոցով իշխանության ղեկին կանգնած քաղաքական ուժերի փոփոխությունը, իշխանության և ընդդիմության փոխատեղումը ժողովրդավարական զարգացման կարևորագույն ցուցանիշ է և միևնույն ժամանակ հասարակության սոցիալ-քաղաքական կայունության ամենաարդյունավետ երաշխիքը: Եթե ընդդիմադիր քաղաքական ուժերը զրկված են ազատ և արդար ընտրությունների միջոցով առկա իշխանություններին փոխարինելու հնարավորություններից, եթե իշխանությունները ժողովրդավար են միայն այնքանով, որքանով ապահովված է իրենց «բնականոն» վերարտադրությունը, ապա քաղաքական պայքարում ծայրահեղ դրսևորումներն անխուսափելի են:

Սահմանադրականությունը իշխանության սահմանափակում է, որը բացառում է քաղաքական պայքարի արդյունքում այնպիսի իրավիճակների ձևավորումը, երբ հաղթողը տիրանում է քաղաքական, տնտեսական, սոցիալական բոլոր լծակներին, իսկ պարտվողը կորցնում է նորմալ գոյատևման բոլոր հնարավորությունները: Հենց այդպիսի իրավիճակներն են կողմերին մղում «կենաց և մահու» պայքարի և պարարտ հող ստեղծում ավտորիտար և տոտալիտար քաղաքական ռեժիմների ձևավորման համար:

Հայաստանի հասարակությունն այսօր կանգնած է այլընտրանքի առջև՝ զարգանալ ժողովրդավարական արժեքների ապահովման և ինստիտուտների ամրապնդման ուղղությամբ կամ ընթանալ իշխանության ավտորիտար միտումների ուժեղացման ճանապարհով՝ դրանով իսկ խորացնելով իշխանությունների և հասարակության մեծամասնության միջև առկա անջրպետը:

Իր իրավունքները և ազատություններն ինքնուրույն պաշտպանելու իրավունքն առաջին անգամ ձևակերպում ստացավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի մասնակից-պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթում: Իհարկե, իրավունքների մեծամասնությունը բացարձակ չէ և այդ իրավունքները կարող են սահմանափակվել: Սակայն այդպիսի սահմանափակումները պետք է լինեն արդարացի, հիմնավորված և չնենգափոխեն այդ իրավունքների և ազատությունների բովանդակությունը:

Շատերը խոսում են համամարդկային արժեքների՝ ազատությունների, մարդու արժանապատվության, քաղաքացիների իրավահավասարության մասին՝ գործնականում ոտնահարելով բոլոր այդ արժեքները: Ուստի, մարդու իրավունքների և ազատությունների գործնական ապահովման նպատակով պետությունը պետք է ձևավորի դրա համար

անհրաժեշտ բոլոր տնտեսական, քաղաքական, սոցիալական և իրավական երաշխիքները:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես մի շարք անցումային երկրներում, ձևավորվել էր օլիգարխիկ կառավարման ռեժիմ, որը զգալիորեն վերահսկում էր մամուլը, կուսակցությունները, ինչպես նաև պետական ինստիտուտները: Դրա հետևանքով տնտեսական էլիտան, դուրս մղելով քաղաքական էլիտային, զբաղեցնում էր նաև նրա տեղը: Բիզնեսը և քաղաքականությունը միահյուսվում էին մեկ կորպորատիվ խմբի մեջ և նույն անձինք հանդես էին գալիս և՛ որպես բիզնեսմեն, և՛ որպես քաղաքական կամ պետական գործիչ: Բիզնես-էլիտան հնարավորություն էր ստանում վճռորոշ ազդեցություն գործել պետական քաղաքականության, առաջին հերթին պետության տնտեսական քաղաքականության վրա՝ պետական իշխանությանը պարտադրելով իր նեղ խմբային կամ նույնիսկ անձնական շահերը: Արդյունքում, օլիգարխիկ խմբավորումներից դուրս գտնվող սուբյեկտները, փաստորեն, զրկվում էին ինքնուրույն տնտեսական գործունեություն իրականացնելու որևէ հնարավորությունից, ինչն անհամաչափորեն խորացնում էր հասարակության տարբեր խմբերի միջև եկամուտների բևեռացումը և բացառում պետական կայունության սոցիալական հիմք հանդիսացող միջին խավի ձևավորման հնարավորությունը:

Ակնհայտ է, որ այս պայմաններում վերանում է ժողովրդավարական իրավունքի կարևորագույն սկզբունքը՝ «չկան իրավունքներ առանց պարտականությունների և չկան պարտականություններ առանց իրավունքների»: Իրավունքները կենտրոնանում են մարդկանց փոքրաթիվ խմբի ձեռքում, իսկ պարտականությունները տարածվում են հասարակության մեծամասնության վրա: Հենց այս հանգամանքն է հանգեցնում հասարակության անդամների մեծամասնության իրավունքների զանգվածային ոտնահարման և, փաստորեն, անհնարին դարձնում դրանց արդյունավետ պաշտպանությունը: Հենց սա է պատճառը, որ հասարակության ամենատարբեր սոցիալ-տնտեսական խավեր ներկայացնող մի ստվար խումբ նախընտրական և հետընտրական շրջանում ակտիվ արձագանքեց մարդու արժանապատվությունը, բոլորի իրավահավասարությունը, արդարությունը և ժողովրդավարական մյուս արժեքները վերականգնելու ընդդիմության կոչերին:

Նորընտիր Նախագահը և ձևավորվող նոր իշխանական համակարգը շատ ծանր ժառանգություն ստացան իրենց նախորդից: Իհարկե, ցանկալի կլիներ, որ այդ ժառանգությունն այդքան ծանր չլիներ: Բայց ունենք այն, ինչ ունենք, և բոլորս միասին պետք է հաղթահարենք այս իրավիճակը:

Այս ամենի համար անհրաժեշտ է լուծել հետևյալ հիմնախնդիրները.

1. Ապահովել հասարակական վերահսկողության ներքո գործող իշխանություն և ուժեղ ընդդիմություն: Միայն այդ դեպքում իշխանությունն այլևս չի կարողանա իրեն ենթարկել հասարակությանը: Արդյունքում ընդդիմությունը ստիպված չի լինի փողոց դուրս գալ, քանի որ կկարողանա իր կարծիքն արտահայտել իրավական և քաղաքական միջոցներով:

2. Բարեփոխել ընտրական օրենսդրությունը: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է վերանայել ընտրական հանձնաժողովների ձևավորման, վերահաշվարկի անցկացման կարգը և այլն:

3. Ապահովել խոսքի ազատություն, պայմաններ ստեղծել էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության և անկողմնակալության ապահովման համար: Առանց բազմակարծության չկա ազատ հասարակություն, ինքնասահմանափակվող իշխանություն: Այդ տեսակետից կարևոր նշանակություն կունենան հեռուստատեսության և ռադիոյի գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխումները: Անհրաժեշտ է ապահովել նաև իշխանության և ընդդիմության ներկայացուցիչների հավասար մասնակցություն հեռուստաընկերությունների և ռադիոկայանների գործունեությունը համակարգող և վերահսկող մարմինների ձևավորման գործում:

4. Բացառել մարդու իրավունքներն ու ազատություններն անհիմն սահմանափակող օրենքների առկայությունը: (Օրինակ՝ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունները):

5. Երաշխավորել իրավահավասարության սահմանադրական սկզբունքը և հասարակության մեջ վերացնել տնտեսության ոլորտում առկա մենաշնորհը, ինչը հնարավորություն կտա վերացնել կառավարման օլիգարխիկ համակարգը: Միայն այդ պայմաններում կբացահայտվի մարդկանց ստեղծարար ներուժը: Եվ որպես վերը նշվածի արդյունք՝ հասարակությունում գոյություն չի ունենա քաղաքական ծայրահեղականության պահանջարկ և, հետևաբար, չի ձևավորվի նմանատիպ առաջարկ քաղաքական ուժերի կողմից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծայրահեղական գաղափարները կյանք են առնում ծայրահեղ բևեռացված հասարակությունից: Եթե հասարակությունը բևեռացված չէ, ոչ մի ծայրահեղական գաղափար չի կարող ոտքի հանել լայն զանգվածների:

6. Պայքարել ոչ թե հետևանքների դեմ, այլ արմատախիլ անել պատճառները: Այդ տեսակետից հույժ կարևոր է մարտի 1-ի իրադարձություններն ուսումնասիրող անկախ հանձնաժողովի ստեղծումը:

7. Ամենավտանգավոր և անհեռանկար բանը, որ կարող ենք այժմ անել, բարեփոխումների իմիտացիան է: